

ՀԱՐԱՆԵՆՑ Ս.

13
Յ. Ա. Վ. 469



ԾԵՐԵՐԻ ԶՐՈՅՑՆԵՐԻՑ

Ա. ԿԱՊՈՒԿ

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

ԹԻՖԼԻՍ

Տպարան Հեղժոնա Գանդուկ, փող.

1911

891.99

Բ -17

15

**ԿԸ ՏՊԱԳՐՈՒԵՆ ՇՈՒՏՈՎ ՄԵՐ ԿԱԶՄԱԾ ԿՐՕՆԻ
ԴԱՍՏԱԳՐՔԵՐԻՑ**

Դ. տարի Մարգարէներ.

Ե. տարի Բրիստոսի կեանքը.

Զ. տարի Առաքելների ժամանակաշրջան
և Հայաստանի լուսաւորիչներ:

Մեր «Հէքեմաթներ», «Շէն թագաւորի աղջիկ»
և «Ներկու աղբէրացեղ» մանկական գրքերն ար-
դէն սպառուած են, մենք ամեն զիջողութիւն
յանձն կառնէինք, եթէ որ մանկական գրականու-
թիւն խրախուսող անհատներ կամ հրատ. ընկե-
րութիւններ հնար տային վայելուչ կերպով պատ-
կերազարդելու:

Հրատարակիչ ենք փնտրում նոյնպէս մեր
այն պատմութեան և բանասիրական գրուած-
ների համար, որոնք տպուած կան «Արձագանք»
լրագրի էջերում:

Арм.
2-3807

2-3807 ac 4K-13

-6 NOV 2011



Ծ Ե Ր Ե Ր Ի

ԶՐՈՅՑՆԵՐԻՑ

Ա. ԿԱՊՈՒՆ

ИВ. № 223

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԷՊՕԽԱ» Դանուկ.

1911



ՆՈՒԷՐ ՊԵՏՈՒՆԱԲԵՆ ԴԵՐԴ ԵՔԻՄԵՆՅՈՒՆ

Զրոյցներն փունջը ձօնում եմ 82 ամեայ պատկառելի ծերին, որ 1839 թ. իրրև մանուկ աշակերտ լըսել է ՔԱԶ ԱՂԱՍՈՒ պատմութեան ընթերցմունքը անմահ հեղինակի բերանից և սիրահարուել վրէն. յետոյ 1850 թ. ուսանող միջոցին Թիֆլիսում այցելել է իրա կորած վարժապետի այրուն և «Վերք Հայաստանի» ձեռագիրը թղթերի մէջ գտնելով արտագրել է տուել ամբողջովին, որ բնագիրն անհետանալու դէպքում, գոնէ պատճէնը մնայ, և ապա 1853 թ-ից ետ, երբ Դորպատից վերադարձել էր, հանգ. Յովս. Ֆոնդոյեանի աջակցութեամբ ամեն ծախք քաշելով տպագրել է «Հայրենասերի Պրք» իրա մօտի պատճէնից և տարածել հայ ժողովրդի խաւերում, որ իմանան թէ կենդանութեան օրով հալածուած իրա սիրելի վարժապետ Խաչատուր Աբովեանցը ինչ լեզու և ինչ հոգի է ունեցել:

Ներկայ տարուս յունվարի 1-ին համեստ ծերն ասում էր. «Լրագիրներից տեղեկանում եմ, որ ազգը ցանկանում է գերեզմանը կորած վարժապետին արձան կանգնեցնել: Ա՛խ, ուր էր թէ ամենաբարի Աստուածը կեանքիս թելն այնքան երկաթացնէր, որ այդ երջանիկ օրն էլ տեսնէի ու յետոյ աչքս փակէի»:

Քամ. Ս.

Յունվար. 1911 թ.

Թիֆլիս

1. Գ Ա Ն Ձ Ը

Գանձը մէկին հարցրեց. «այ մարդ, եթէ գամ քեզ մօտ, ինձ ի՞նչպէս կը պահես»: Մարդը պատասխանեց. «ես քեզանով լաւ կուտեմ, լաւ կը խմեմ, փառաւոր կը հագնուեմ, անհոգ կեանք կը քաշեմ»:—«Ձէ, ասեց գանձը, դու իմ ուզած մարդը չես»: Գնաց ուրիշի մօտ. «այ մարդ, եթէ քեզ մօտ գամ, ինձ ի՞նչպէս կը պահես»: Մարդն ասեց. «դու որ գաս ինձ մօտ, քեզանով աղքատներին ողորմութիւն կը տամ, ընկեր-հարեանի կօգնեմ, մէկին շոր կըտամ, միւսին հաց. մի խօսքով քեզ բարի բաների վրայ կը գործադրեմ»:—«Ձէ, քեզ էլ հաւան չեմ, ասեց գանձը և գնաց երրորդի մօտ. «այ մարդ, եթէ քեզ մօտ գամ, ինձ ի՞նչպէս կը պահես»: Մարդն ասեց. «այ գանձ, ինձ մօտ որ գաս, քեզանով ոչ կուտեմ, ոչ կը խմեմ, այլ մետաքսէ թաշկինակի մէջ կը փաթաթեմ ու կը պահեմ սնդուկում: Լաւ կը համարեմ մսիցս կտրել, ուտել, քան թէ քեզանից պակասցնել: Ահա այսպէս կը պահեմ ու կը ծառայեմ քեզ»:—«Հա, ուրախացած խօսեց գանձը, դու իսկ և իսկ իմ ուզած մարդըն ես, արժէ քո կշտին մնալ»: Եւ մնաց:

2. ԺԱՄԻ ԵՒ ԶԱՂԱՅԻ ՎԷՃԸ

Թմբի վրայից ժամը արհամարհելով ձորի ջաղացին ասեց. «ես որ կամ, տաճար եմ, բարեկրօն տէրտէրները իմ սեղանի վրայ են պատարագ մատուցանում, բարեպաշտ ժողովուրդը

իմ մէջ է չորբում, աղօթք անում: Աստուած իմ միջոցով է մարդկանց հետ հաշտուում ու նրանց մեղքերը ներում: Դու ի՞նչ բան ես իմ կշտին, ջաղաց»:—«Բո սրբութեան դէմ ես ոչինչ չունեմ, պատասխանեց ցածիկ ջաղացը, բոլոր ասածդ ճշմարիտ է, բայց ինչո՞ւ ես պարծենկոտի պէս իմ երախտիքը մոռանում: Չէ՞ որ դու քո պայծառութեամբ ինձ ես պարտական»:—«Ի՞նչ պէս, զարմանալով հարցրեց ժամը, ի՞նչ բանով եմ քեզ պարտական, ջաղաց»:—«Ահա թէ ի՞նչ բանով, սուրբ ժամ: Ես որ գիշեր-ցերեկ գլուխս կախ ավիւրի փոշու մէջ մտած տանջւում, աշխատում եմ, բոլորը քո բարեկրօն տէրաւորների ու քո բարեպաշտ ժողովրդի համար է: Եթէ ես իմ չախչախը լռեցնեմ, աշխարհական թէ հոգևորական՝ ամենը կը կոտորուեն. ոչ քահանայ կը մնայ, որ քո սեղանի վրայ պատարագ անի և ոչ ժողովուրդ, որ քո մէջ աղօթի ու քո պայծառութեան համար մտածի»:

Ժամն այս լսեց ու մնաց լուռ:

3. ԽԻԿԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԸ

Մի օր թագաւորը Խիկար իմաստունին հարցրեց. «Ինչի՞ խելքով լիք մարդիկ գանձով դարդակ են լինում: Օրինակ դու, իմաստուն ես ու աղքատ»:—«Դա բաղդի բան է, թագաւոր, պատասխանեց Խիկարը, և դրա մէջ մեղաւորը աստղըն է»:—«Ի՞նչպէս, բացատրիր տեմնեմ», ասեց թագաւորը:—«Ա՛յ, օրինակի համար՝ կան շատ անգէտներ, որ թագաւոր են ու գանձով լիք, իսկ

շատ գիտուններ հացի կտորի կարօտ են: Այդ նրանից է, որ գիտուն, իմաստուն մարդի ծընուելու ըոպէին նրա բաղդի աստղը այծի չոր պոզի վրայ է ընկել, իսկ թագաւոր մարդի ծընուելու ըոպէին նրա բաղդի աստղը ոչխորի տխլիկ դմակի վրայ: Այդ պատճառով ինձպէսները աղքատ ու դարդակ են գանձի կողմից ինչպէս այծի չոր պոզը, իսկ քեզպէսները հարուստ ու լիքն են ինչպէս ոչխարի փափուկ դմակը»:

4. ԱՂՈՒԷՍ ԵՒ ԿԱՔԱԻ

Աղուէսը մի կաքաւ ճանկեց, ուզում էր ուտել: Կաքաւը բարձրաձայն կըղկղաց. «օրհնեալ լինես, Աստուած, որ ինձ արքայութեան արժանացրիր, վերջապէս կազատուեմ այս փուշ աշխարհից: Դու էլ, բա՛րի աղուէս, առաջ գոհութիւն արա Աստծուն և յետոյ ինձ կեր, որ հոգուդ վարձք լինի»: Աղուէսը կաքաւի խնդիրը կատարելու համար, ետևի ոտների վրայ կըկըզեց, աչքերը երկինք գցեց ու կըվկըվաց. «շնորհակալ եմ քեզանից, բարերար Աստուած, որ իմ ապրուստը հոգացիր»: Այս ժամանակ կաքաւը նրա բերանից թը՛ռռ փախաւ: Աղուէսը փախչող կաքաւի ետնից երկու վայրկեան ապշած նայեց ու երկու թաթով իրա գլխին խփելով խօսեց. «ձիւն գայ խելառ գլխիդ, աղուէս, միթէ չե՞ս իմանում, որ առաջ պիտի փորը կշտացնել, յետոյ Աստծուն գոհութիւն անել»:

5. ՄԻԱՄԻՏ ԳԱՅԼ

Գայլը հանդուժ մի էշ տեսաւ, վրայ ընկաւ, որ ուտի, էջն աղաչեց. «արեւիդ մեռնեմ, քաջասիրտ գայլ, մի վիշտ ունեմ սրտումս, այն հեռացրու ինձանից, յետոյ, ինչպէս ճակատագիրս է, ինձ անուշ արա»։ — «Ի՞նչ վիշտ է, ասա տեսնեմ, հարցրեց գայլը։ — «Մի մեխ է ցցուել ետի ոտիս մէջ, շատ տանջում է, արի հանիր, որ սիրտըս հովանայ»։ — «Աչքիս վրայ, խնդիրդ մեծ բան չի, ասեց գայլը ու անցաւ էջի ետեի կողմը, որ ցցուած մեխն ատամով բռնի, հանի, էջն ինչքան ուժ ունէր, ոտով այնպիսի քաջի խփեց գայլի բերանին, որ ատամները փորը թափեց։ Գայլը մղդկրտալով սկսեց գլուխը լաց լինել և ասել. «արժանի էր քեզ, միամիտ գայլ, որ բերանդ արիւնլուիկ արին. անխելութ ան ինչպիսի հանապազ մտադործ ես եղել, հիմի քեզ հով ասեց, որ նալբանդ դառնաս»։

6. ՎԻՐԱՒՈՐ ԲԱԽՐԷՆ

Որսկանները բախրին շներով կալ հայ կալը գցած հալածում էին, որ սպանեն։ Վերջը գնդակով վիրաւորուած բախրէն առաջներից փախչելով ընկաւ գետի մէջ։ Սիրտն այրուելուց ջուր էր խմում։ Կրիան, որ գետափին արեւող էր աւել, պատեանից գլուխը հանեց ու կամենալով բախրին ցաւակցութիւն յայտնել՝ այսպէս խօսեց. «ինչո՞ւ մարդիկ այսքան անօրէն են դարձել, ի՞նչ են ուզում խեղճ անասուններից։ Երէկ էլ իմ

ձեռնից էին ընկել հալածում, հազիւ ձեռներից պրծայ»։ Բախրէն տեսնելով, որ իրա հետ համեմատուողը դանդաղաշարժ կրիան է, նրա խօսքերից աւելի խոր խոցուեց ու հառաչելով ասեց. «ան, երանի մի գնդակ էլ աւելի դիպչէր ու ինձ սպանէր, քան թէ կենդան մնայի, անձոռնի կրիայ, և քեզ հետ համեմատուէի»։

7. ԸՆՏԻՐ ԶԻ

Մի զօրեղ թագաւոր երեք իմաստունների կանչեց իրա կուշտը և մէկ մէկ հարցրեց նրանց. «եթէ ուզածս չէք կատարել, գլուխներդ կըկտրեմ։ Ինձ հարկաւոր է մի ընտիր ձի, որ կիստարի պէս գաւաք ունենայ, ուղտի պէս մեծ աչքեր, տանձի պէս սմբակներ և նապաստակի պէս ազդրներ»։ Իմաստունները մնացին լուռ։ Թագաւորն սպասեց, որ նրանք մտածելով պատասխանեն, իմաստունները չարհարուեցին, բայց հնար չըգտան։ Նրանցից երկուսը վերահաս մահից պըրծնելու համար խորամանկութեան դիմեցին. «թագաւոր, գլուխդ ողջ լինի, ասին, քո ցանկացած նշաններով ձին արդէն կայ, բայց ասա մեզ, թէ ի՞նչ գոյնի ես ուզում, որ տեղը ցոյց տանք»։ Այդ լսելով թագաւորը մտքի մէջ ընկաւ, չէր իմանում թէ ո՞ր գոյնն ընտրի։ Այդ ժամանակ երրորդ իմաստունը, որ ճշմարտախօս համարձակի մէկն էր, ասեց. «տէր թագաւոր, զուր տեղն ես դու մտածում և մեզ չարհարում, քո ուզած նշաններով ձին քեզանից աւելի շնորքով մարդ այս ըռպէիս նստեց ու փախաւ»։ — «Ար-

դար է ասածդ, խօսեց թագաւորը, այդպիսի ընտիր ձին աւելի շնորքով մարդու է արժան»:

8. ՎԵՏԻՆ ՈՒ ԷՇԻ ՔՈՒՌԱԿԸ

Վետին որ կար, մի դարդարար, աշխարհի հոգս շալակող, ամեն ցաւ սրտին առնող մարդ էր: Մի օր հացն առաջին, գլուխը կախ ուտում էր, յանկարծ հարեանը լոյս ընկաւ ու բղաւեց. «աչքդ լոյս, Վետի, մեր բած էշը ծնել, մի խըլըշտուրիկ քուռակ է բերել»:
— «Ա՛յ աչքդ լուսի կենայ, հարեան, այդ ինչ լաւ բան է պատահել: Սմբակը պինդ լինի, օջաղի համար մի օգտակար անասուն է աւելացել»:
Վետին ամեն դարդ մոռացած սկսեց ուրախ սրտով հացը ծամել: Բայց մի րոպէ չանցած հարեանը վրայ բերեց. «գիտե՞ս ինչ, Վետի, չոռի կալած քուռակը պոչատ է ծնուել, աքի չունի»:
— «Թո՛ւ հա՛, այդ ինչ ապիր, անց թէ պոչատ է ծնուել, վա՛շ. ափսոս, կրկին դարդոտուեց Վետին ու հացի կտորը բերանից հանելով ձայն տուեց. «ա՛ կնիկ, արի հացը վեր կալ, էլ կուլ չի գնում»:
— «Խի՛, ա՛ մարդ, հարցրեց կնիկը, ի՞նչ անցկացաւ մտքովդ, որ վա՛շ վա՛շ ես անում»:
— «Ո՞նց թէ ինչ, ա՛ կնիկ, հապա քիչ ցաւ է՞, որ մեր հարեանի էշը պոչատ քուռակ է բերել: Կարելի է ժամանակով բան եմ ուզում, մէջքին աղուն բարձում, ջաղաց տանում. ճամբին որ ցեխի մէջ վէր ընկնի, ես ուրտեղից բռնեմ, որ վեր կացնեմ»:

9. ԵՐԿՈՒ ՃԱՄԲՈՐԴ

Երկու մարդ ճանապարհին ընկերացած գրնում էին զրոյց անելով: Յանկարծ անձրևը վրայ տուեց: Ճամբորդներից մէկը վերարկու ունէր, փէշը փռեց սիւսի գլխին ու նրան թրջուելուց ազատեց: Վերարկուի տէրը պարծենկոտի մէկն էր, իրա արած ծառայութիւնը մեծ բան էր համարում, ուստի անձրևը դադարելուց ետ ճանապարհ գնալիս նա ընկերի զրոյցը շուտ շուտ կտրում էր ու հարցնում. «ընկեր, տեսա՞ր իմ բարեսրտութիւնը, չըթողի, որ քեզ անձրևը թրջի»:
Սօսքի գլխին, վերջին միշտ իրան գովում էր ու կրկնում. «տեսա՞ր, ընկեր, ինչպէս յաւութիւնս արի, քեզ անձրևից թափեցի»:
Մէկ ասեց, հինգ ասեց, ընկերը տարաւ, բայց հակառակի պէս ճանապարհը երկար էր ու նրա պարծենկոտութիւնն էլ անվերջ, արած չնչին ծառայութիւնը երեսին այնքան բռնեց, որ խեղճին համբերութիւնից հանեց: Սա իրա ներսում խոր վերաւորում էր, բայց բան չէր ասում, գլխակախ մտածում էր՝ մի հնարով նրա մռննթի տակից շուտ դուրս գալ, որ մնացած ճանապարհին նրա ձեռին չըտանջուի:

Նրա բաղդից մի ձոր պատահեց ու խորքում մի առու պսակողաց, Սնիսոս ջրկնուեց ընկերից ու վազ տալով հասաւ առուին, մէջը շորերով պարկեց, շուռ ու մուռ անելով ոտից մինչև գլուխ ջրոգող եղաւ: Այդ վիճակում վերադարձաւ ընկերի մօտ ու խօսեց. «այ եղբայր, այսօր քու վերարկուն եթէ չըլինէր, այսքան թրջուած կը

լինէի, չէ՞, Դէ, հէնց իմացիր, վերարկուիդ փէշը վրէս չես գցել ու ես անձրևից այս օրն եմ ընկել: Խնդրում եմ, մինչև ճանապարհ վերջացնելը էլ երեսովս չըտաս, որ լաւութիւն ես արել: Լաւ է ջուրն ընկած, քան մոռնաթ քաշած:

10. ԻՇԽԱՆՆ ՈՒ ՎԱՐՆՈՐԴԸ

Զօրեղ իշխանը ոսկեթամք նոյն գիւղի վրայ նըստած, թիկնապահներով շրջապատած, գնաց դաշտերը ման գալու: Ազնուարիւն նոյնը շատ գարի ուտելուց ուրախ թռչկոտում էր, հանգիստ չէր մնում տիրոջ տակին: Իշխանը նկատեց մի խոր, երկար փոս, որ աւելորդ ջրերը ժողովելու համար արտերի ներքև փորում են: Դրանից քիչ հեռու երկրագործը երկու նիհար եզնով տափ էր վարում: Իշխանը մի վայրկեան կանգնեց ու իրա մարդկանցն ասեց. «տեսէք, նոյն ինչպէս է թռչելու այս փոսի գլխով»: Այս ասելով կրակոտ անասունի կողքերին ասպանդակները սեղմեց: Աշխոյժ ձին տիրոջ կամքը հասկանալով նապաստակի նման թռաւ փոսի վրայով: Իսկոյն և եթ օդում լսուեց վարնորդի խապոտ բարձր ձայնը. «սպրի ուսըդ, ա՛յ իմ եղը»: Թիկնապահները նայեցին նրա կողմը, տեսան վարնորդին ձեռներով լծկանի գլուխը, ուսը, մէջքը շոյելիս, փայփայելիս: Իշխանը, որ անուանի էր իրա արդարասիրութիւնով, շատ վրդովուեց կռակաւ վարնորդի յանդուգն արարքից, իսկոյն նոյն գլուխը դէպի նա թեքեց ու մօտը հասնելով չարացած ասեց. «յիմար վարնորդ, ի՞նչ ծուռ բան ես անում: Փոսի

գլխով թռչողը իմ արագավազ նոյնն է, դու գովասանքը ծանրաքայլ եղանն ես տալիս»:— «Դու խո ող չի՞նի, իշխան, պատասխանեց վարնորդը, ես արդար բան ասի, քո բարկանալը դուր է: Հանդարտ կերպով քիչ խոր մտածիր, կը տեսնես, որ գովասանքը չարքաշ եղանն է պատկանում և ոչ ախոռում դարու վրայ կապած նոյն գին»:— Ի՞նչպէս, խստաձայն հարցրեց իշխանը:— «Ահա թէ ի՞նչպէս. եթէ համբերատար եզները լծան տակ մաշուելով տափ չըվարէին, ցանածը չը ցաքէին, հասած հասկերը կասելով ամբարներդ վարով չըլցնէին, հաւատա, իշխան, ոչ մի նոյն գին երանը չէր լինի խրխրնջալէ դաշտ դուրս գալ և մեծ փոսի գլխով թռչել»: Արդարասէր իշխանն այս խելօք պատասխանի վրայ գոչեց սրտազին. «շատ արդար ասիր, վարնորդ. կեցցես դու էլ, քու լծկանն էլ»: Բուռը դէպի նա մեկնելով ասեց. «քու այդ խօսքի համար ահա քեզ այս ոսկին»:

11. ՇԱՏԱԽՈՍ ԿՆԻԿ

Մարդի մէկը զգուել էր իրա կնկայ շատախօսութիւնից, հնար էր փնտրում, որ նրա ձեռից ազատուի: Անտառում ման գալիս տեսաւ մի խոր հոր. «սա շատ լաւ տեղ է իմ կնկայ համար», մտածեց մարդը, մի սալ բար ճարեց, դրեց մօտը ու գնաց տուն, կնկանն ասեց. «այ կնիկ, անտառում գանձ եմ գտել, գնանք բերենք»: Երկուսով գնացին. հորի մօտ մարդն ասեց. «ես թոկը կապեմ մէջքըս, դու ինձ կախ արա, որ գանձը դուրս հանեմ»: Կնիկը թէ՛ «այ մարդ,

դու անշահասէր ես, քիչը կը հանես, շատը կը թողես. աւելի լաւ է, ես մտնեմ, բոլորը հանենք, տանենք տուն»։ Մարդն էլ այդ էր ցանկանում. «յօժար եմ, այ կնիկ, դու մտիր». ասեց ու թոկը մէջքից կապելով իջեցրեց հորը, յետոյ բերանը սալ քարով ծածկեց ու թողեց հեռացաւ։ Կնիկը հորի մէջ ձեռները ման ածեց, որ գտնէ գտնի, տեսաւ մի շնչաւոր. «ո՛վ ես, ի՞նչ ես», սկսեց հարցեր տալ ու անդադար խօսել։ Չար յաշատքի գլխաւորն էր հորի միջինը, կնկայ շատախօսութիւնից բեզարեց։ Նրա ձեռից ազատուելու համար կանչում էր դէպի վերև ու աղաչում, որ իրան ազատեն։ Երկու օր անցնելուց ետ մարդը գնաց հորի կուշտը ու աղաչանքի ձայներ լսեց։ Մտածեց. «երևի կնիկս խելօքացել է, է՛հ, մեղք է, հանեմ»։ Թոկը մեկնեց ներքև ու քաշեց. յանկարծ գուրս եկաւ յաշատքապետը ու խօսեց. «այ մարդ, երբ դու ինձ այն կնկայ ձեռից ազատեցիր, քեզ առանց վարձատրութեան չեմ թողնիլ։ Ես գնում եմ թագաւորի տղի մէջ մըտնեմ, արի բժիշկ դառ, մոխրաջուր արա, խմացրու, ևս գուրս կը գամ, դու շատ ոսկի կըստանաս նրանից»։ Ինչպէս յաշատքապետը պատուիրեց, մարդն այնպէս վարուեց, գանձ ստացաւ։ Յետոյ յաշատքապետն ասեց. «ուրիշ թագաւորի քաղաք եմ գնում, նրա տղի մէջ մտնեմ, արի բժիշկ դառ, մոխրաջուր խմացրու ու մեծ վարձ ստացիր»։ Մարդն այդ երկու բժշկութիւններէ համար շատ գանձ ստացաւ. յաշատքապետն ասեց. «այ մարդ, բու արած լաւութեան համար

դու բաւական շահուեցիր, սրանից ետ ինձ հանգիստ թող ու գնա քեզ համար ապրիր»։ Մարդը փողի համին էր ընկել, ագահացել, յաշատքապետին չըթողեց, հետքը բռնած գնաց ուրիշ քաղաքում առաջը լոյս ընկաւ։ «Հիմի ո՛ր ես եկել, հարցրեց յաշատքապետը, չէ՞ որ հաշիւներս վերջացրել ենք»։ — «Քեզանից բան չեմ ուզում, միայն յայտնում եմ, որ այն կնիկը հորից դուրս է եկել ու քեզ է փնտրում. ի՞նչպէս ես ցանկանում, տեղըդ ասեմ թէ չէ»։ — «Ի սէր Աստծու, պատասխանեց յաշատքապետը, ինչքան ուզում ես ոսկի ստացիր, միայն իմ տեղը նրան մի ասիլ, թէ չէ՝ կը գայ շատախօսութիւնով գլուխս կըցաւացնի»։

12. ՉԻՆ ՈՒ ԹԱՄԲԱՔԻՆ

Հայը տեսքով սիրուն, բայց մանգալու մէջ մի ալարկոտ ձի ունէր։ Նրան բանայնելուց զգուելով մի օր կապը բռնեց, որ տանի քաղաքում մի կերպ ծախի, այդ ցաւից ազատուի։ Պնալիս պատահեց մի թուրքի, որ ուսին լիք խուրջին ունէր. «բարի աջողում, ան թուրք, ո՛ր ես գնում»։ — «Աստծու բարին, ան հայ, քաղաք եմ գնում ապրանքս ծախելու»։ — «Խուրջինումդ ի՞նչ ապրանք ունես, թուրք աղբէր»։ — «Շատ ընտիր, պատուական թամբաքի, հայ աղբէր»։ Հայը մի երկու լոպէ մտածելուց ետ խօսեց. «թուրք աղբէր, թամբաքիդ տանում ես փողով ծախելու՝ որ նրանով ապրանք առնես, իմ ձիուց էլ լաւ, ընտիր ապրանք։ Արի թամբաքիդ տուր, իմ ձին վեր կալ. էլ ոտ չըծեծենք, քաղաք գնանք, այս

ճամբակիսից ետ դառնանք»։ Թուրքը ձիու տես-
քին նայեց, քէֆն եկաւ, սրտում ուրախացաւ
հայի միամտութեան վրայ, որ առանց իրա խուր-
ջինի փտած թամբաքին տընտղելու քեանլան ձին
տալիս է։ «Համաձայն եմ, հայ աղբէր, թէպէտ
իմ թամբաքին նաղդ փողով էլ կարող եմ ծա-
խել, բայց երբ ուզում եմ՝ ձիու հետ փոխեմ,
խաթրըդ չեմ կոտրիր»։— «Ա՛ն ձին, թուրք աղբէր»
տար խէրը տես»։— «Ա՛ն թամբաքին, հայ աղբէր,
դու էլ տար, խէրը տես»։ Իրար ձեռ տուին ու
ապրանքները փոխեցին։— «Թուրք աղբէր, սպա-
սիր, խօսեց հայը, առուտուրը վերջացրինք, դէ
արի հիմի ամեն մէկս մեր ապրանքի բնութիւնն
ու յատկութիւնն ասենք, որ հոգու կորուստ չը
լինի»։— «Դրան էլ համաձայն եմ, ասեց թուրքը,
եթէ կամենաս, առաջինը ես կասեմ։ Ահա լսիր։
Իմ թամբաքուի յատկութիւնն այսպէս է. ամե-
նից առաջ սուր դանակով պիտի լաւ մանր կտրը-
տես, յետոյ կտրրտած թամբաքով պիտի չիբուխդ
փուշ-փուշ, առանց սեղմելու լցնես, յետոյ ամեն
տեսակ փէտի կրակը թողած, միայն դաժի կար-
միր պէժը չիբուխիդ վրայ մշտական պահես։ Եթէ
այս ասածներս կատարելուց ետ թամբաքին ծու-
լութիւն անի, չըվառուի, քո արեկն մատաղ, հայ,
թամբաքիս ետ բեր մեր գեղը, Աստծու հալալ իմ
ապրանքն է»։

Հայը ժպտալով պատասխանեց. «Թուրք աղ-
բէր, շատ շնորհակալ եմ, որ թամբաքիդ գործա-
ծելու հանգերը մի առ մի ինձ սովորցրիր։ Հիմի
հերթն իմն է, որ ձիուս բնութիւնն ասեմ։ Լսիր»։

գլխիդ մատաղ, թուրք. ամենից առաջ պիտի քեզ
համար կանոն շինես ու մտքումդ պահես, որ
դարիդուս բարձրանալիս ձիուս վրայ չընստես.
յետոյ դիւրան տեղը կապը հանգիստ բռնած միշտ
ետևիցդ քաշես, միայն երբ գլխավէր տեղ պա-
տահի, վրէն նստես ու ճիպտով քշես, հա՛ քշես։
Այս իմ պատուէրները ճշտութեամբ կատարելուց
ետ եթէ իմ ձին ծուլութիւն անի, չըգնայ, արեկդ
մեռնեմ, թուրք, ձին ետ բեր իմ դուռը, Աստծու
հալալ իմ ապրանքն է»։

13. ԵԶՈՊՈՍՆ ՈՒ ԻՐԱ ԷՇԸ

Էշը շատ նեղացել էր Եզոպոսից, որ նա էլ
ուրիշների պէս իրա ցեղին ծաղրում ու անհաս-
կացողի տեղ է դնում։ Մի օր տիրոջը խոնարհ
գլուխ տալով խօսեց. «Եթէ հոգիդ կըսիրես, մի
բան եմ խնդրում, կատարիր»։— «Ի՞նչ է խնդիրդ,
ասա լսեմ»։— «Դու քո առակներով ինձ շատ ես
անարգում ու իմ ցեղին անչափ գեշացնում։
Այսուհետեւ եթէ խօսելու լինես իմ մասին, մի
քիչ խելօք ու սիրուն դուրս բեր ինձ»։— «Ձեմ
կարող խնդիրդ կատարել, պատասխանեց Եզոպո-
սը։— «Ի՞նչ մեծ բան է, որ չես կարող»։— «Բանը
մեծութեան մէջ չի, այլ արդար չի լինիլ, եթէ
քեզ ու քո ցեղին խելօք ու սիրուն դուրս բե-
րեմ։ Քո ցեղին խելօք ու սիրուն ասելը սազ չի
գալ. այն ժամանակ քո պատճառով ինձ յիմար
կանուանեն։ Չէ, աւելի լաւ է, քեզ գէշ ասեն,
բան թէ ինձ էշ»։

14. ԶԻՆ ՈՒ ԵԶԸ

Զին ու եզը վիճում էին իրար հետ։ Զին վրիզը հպարտ կռացրած ու աչքերը ոլորած խօսում էր. «Դու ռվ ես կամ ինչի՞ ես պէտք, այ ծանրագոգոթ եզը, որ ինձ հետ ոտ ես մեկնում։ Ես որ կամ, աշխարհի մէջ ամենագեղեցիկ կենդանին եմ, որին թագաւորները, իշխանները զարդարում են ոսկէ, արծաթէ սարքերով ու առօր-փառօր նստում վրէն»։ Եզը խոնարհութեամբ պատասխանեց. «Էհ, խրլխընջան ձի, եթէ ամբարտաւան չըլինես, կը տեսնես, որ իրաւունք ունեմ քեզ հետ համեմատուելու։ Ի՞նչ նշանակուած թիւն ունի քո գեղեցկութիւնը աշխարհի համար, երբ նրան շէնացնողը իմ կոշտացած ուսն է։ Եթէ ես գլուխս կախ չըչարշարուեմ, չըվաստակեմ, գարու հորն էլ զարդակ կը փնայ, ցորնի ամբարն էլ, դարմանի մարագն էլ։ Դո թագաւորն իրա ժողովրդով և քու գոռոզ ցեղը, ամենդ էլ իմ աշխատանքով ապրածներ էք։ Եթէ աշխարհի մէջ չարքաշ եզան քրտինքը չըլինի, մեծից մինչև փոքրը սովամահ կը լինեն, այս լաւ իմացիր»։

15. ԱՂԲԱՏԻ ԱՐԺԱՆ ՍՈՒԳԸ

Մի աղքատ դարբին երեք զաւակ ունէր, երեքն էլ աղջիկ։ Հոգեվարքի ժամանակ նրանց կանչեց զլրավերնն ու ասեց. «այ որդիք, քանի շունչը վրէս է, սուգ արէք, լսեմ ու մխիթարուած հեռանամ այս աշխարհից»։ Մեծ աղջիկը թաշկինակը ձեռն առաւ ու բարձրաձայն սգաց.

Դովլաթաւոր իմ հէր ջան, տաւարատէր իմ հէր ջան, մեծ անուհիդ մեռնիմ, իմ հէր ջան»։ Հիւանդը կուռը բարձրացրեց ու նուազած ձայնով ասեց. «սուս կաց, աղջիկ, այդ տեսակ գովասանքներն ինձ սազ չեն գալ. ես ոչ կեանքումս դովլաթ եմ ունեցել, ոչ մեծ անուն։ Հերթը միջնակ աղջկանս է, թող բերան բաց անի, տեսնեմ՝ նա ի՞նչպէս է սգում»։ Միջնակը թաշկինակը ձեռն առաւ ու բարակ ձայնով զեց. «Լիմաստուն խօսք ու դրոյցիդ մատաղ, իմ հէր ջան, երկար ու սիրուն հասակիդ մատաղ, իմ հէր ջան, աննման աչքերիդ ու գեղեցիկ պատկերիդ մատաղ, իմ հէր ջան»։ Դարբինը դարձեալ բարձրացրեց նիհարած ձեռը ու դժգոհ դէմքով ասեց. «աղջիկ, սուս, այդ սուգն ինձ չի պատկանիլ, որմին ասածներիդ չի հաւատալ. ես ոչ իմաստուն եմ եղել, ոչ գեղեցիկ։ Հերթը փոքր աղջկանս է, թողէք մօտիկ գայ, տեսնեմ՝ նա ի՞նչ է ասում»։ Ամենափոքրը մօտեցաւ հօրը, կռացաւ, ձեռը համբուրեց ու կրծքին ընկած մորմոքուող ձայնով սգաց. «վայ իմ հէր, վայ իմ հէր. խեղճ օրիդ մատաղ լինեմ, իմ հէր, չարքաշ կեանքիդ մատաղ լինիմ, իմ հէր։ Ժամանակ էր լինում, որ անձողը ճարելիս երկաթ չէիր ճարում, երկաթը ճարելիս անձող չէիր ճարում։ Վայ իմ լաւ հէր, վայ իմ աշխատասէր հէր»։ Հիւանդը հանգիստ շունչ քաշելով խօսեց. «հա, այդպիսի արդար ու անկեղծ խօսքերի գէմ ոչինչ չունեմ ասելու. ինձ պէս խեղճ, աղքատ մարդու արժան սուգն ու խեղճ հէնց դա է։ Ապրես, իմ անուշ աղջիկ, իմ հէր ջան»։



3666-82

կշտանաս, որ հօրդ սրտից ջուր խմեցիր»։ Ձեռները դրեց նրա գլխին, օրհնեց ու քիչ յետոյ մը խիթարուած վախճանուեց։

16. ԳԻՆԻՆ ԵՒ ԽԵԼՔԸ

Մի օր ճաշի վրայ բաժակի ոսկեգոյն գինին ասեց վարպետ Օհանի խելքին. «գլխի տէրը դու ես, իրաւունք տուր զրոյից մտիկ անեմ դէպի ներս»։— «Համեցէք, մտիկ արա դէպի ներս, ինչքան կուգես, պատասխանեց խելքը։

Բաժակը դատարկուեց վարպետի կողորդում։ Երբ մի քանի ըոպէից ետ բաժակը կրկին լիքն էր, գինին ասեց խելքին. «զրոյից շատ բան չի երևում, իրաւունք տուր մի ոտով ներս մտնեմ ու անխօս նայեմ, տեսնեմ ի՞նչ է կատարուում ներսը»։— «Իրաւունք եմ տալիս, մտիր, պատասխանեց խելքը, զուարճացիր դիտելով»։ Բաժակը նորից դատարկուեց ու քիչ յետոյ երբորդ անգամ լցուելով խելքին ասեց. «գլուխը շատ զարմանալի շէնք է, մէջը հազար ու մի ոլորապտոյտ տնցքեր կան, մի ոտով ներս կանգնած չեմ կարողում կարգին բան տեսնել։ Ուղեղի ծալքերում հրաշալիքներ են երևում, որոնց մասին աշխարհն ամենեւին տեղեկութիւն չունի։ Իրաւունք տուր մի ըոպէ, երկու ոտով ներս մտնեմ, ամեն կողմն էլ աչք ածեմ ու խսկոյն դուրս գամ»։— «Պրօպղան գինի, պատասխանեց խելքը, խնդիրը չեմ կոտրել, գնա ներս ու ազատ շրջիր գլխի բոլոր մասերում։ Եթէ պակաս բան տեսնես, նըկատողութիւն արա, այնտեղ ոչ ոք չի համար-

ձակուիլ քեզ ընդդիմանալ։ Ես ինքս սիրով կը հնազանդուեմ քո պատուէրներին»։ Երբ վարպետ Օհանի կողորդում մեծ բաժակը մի քանի անգամ քրլքրլալէ դատարկուեց, գինին խելքին այս առաջարկն արեց. «շնորհակալ եմ քո քաղաքավարութեան համար, որ ինձ իրաւունք տուիր քո տանը պատուէրներ տալ. սակայն առաջ դու պիտի իմ պատուէրները յարգես ու կատարես, որ ծառաներդ տեսնեն ու ինձ լսեն»։— «Ի հարկ է, պատասխանեց խելքը, ինչ խոստացել եմ, պիտի կատարեմ։ Հրամայիր, ի՞նչ ես կամենում»։ Գինին մի անգամ էլ դատարկուելուց ետ խրոխտածայն գոռաց խելքի վրայ. «ես իբրեւ գլխի ժամանակաւոր տէր քեզ հրամայում եմ, որ հեռանաս այստեղից։ Քանի որ ես կառավարիչ եմ, քո ներկայութիւնը ինձ համար աւելորդ է ու խանգարիչ»։ Խելքը նոր հասկացաւ թէ ինչ փորձանքի մէջ է ընկել։ Շատ էլ դուրեկան չէր նրան այդպիսի հրաման լսելը, բայց տուած ազնիւ խօսքին հնազանդուելով գլխից դուրս գնաց։ Վարպետ Օհանի տէրը հիմի դառաւ փրփրաւոր գինին և սկսեց աջ ու ձախ, խենթ ու խելաւ կարգադրութիւններ անել։ Նրանց մասին յետոյ։

17. ԿՌՈՒՍՍԷՐԸ

Անունը Ղևոնդ էր, ում մօտ գնում էր ծառայելու, միշտ կռուով էր հեռանում։ Մի անգամ չեղաւ, սը մէկի մօտից համով դուրս գայ։ Ծեր Խնչանը, որ գիւղի ունեւոր ու բարեսիրտ մարդն էր, ինքն իրան ասեց. «ամենը Ղևոնդին

մեղադրում են, թէ կռուարար է. վայ հոգի, կարելի է դուր են առում: Ծուռն ու շիտակը փորձելու համար պիտի Ղևոնդին ծառայ բռնեմ, տեսնեմ ինչո՞ւմ է նրա ամբարշտութիւնը, որ միշտ անգոհ են նրանից: Այս ասելով անգործ մնացած Ղևոնդին կանչեց, մի տարի ժամանակով վարձեց և իրա մէջ որոշեց ամեն բանում նրա կամքով գնալ, կռուի ոչ մի պատճառ չը տալ: Ղևոնդը քաղցր ու հանգարտ սկսեց ծառայել և մի քանի օր շատ կարգին տարաւ: Բայց շարժի գլխին յանկարծ բարկութեան իծաներն եկան. էշով ջաղացն էր գնում, սկսեց նրան հայհոյել ու վերջը ձեռի մահակով խեղձի գլխին այնպէս խփեց, որ անասունն էլ պէտք չեկաւ: Սպասում էր Ղևոնդը, որ խեչանը խօսի էշի համար, բայց ծերը ձայն չը հանեց ու տանեցոց պատուիրեց՝ ծպտոն չըհանեն: Ղևոնդը տանեցոց հետ կռուելու պատճառ էր փրնտրում, պատճառ տուող չը կար. ճարը կտրած հերսը անասունների վրայ էր հանում: Մի օր իծաներն եկած ժամանակ բարով խփեց, թանկագին գոմշի պողը տեղից հանեց, արիւնաթաթախ արեց: Խեչանը տեսաւ ու լուռ համբերեց: Ղևոնդն այդ լուռութեան վրայ եփ էր գալիս, աչքերը կատաղի հուրքով վառուած կռուի էր մնում, բայց դէմը մարդ չը կար: Խեչանը նրա մտադրութիւնը պարզ տեսնելով ամեն փեսաների անձայն համբերեց, մինչև եկաւ տարին բոլորուեց: Ծառան յոյս ունէր, որ գոնէ պաշտօնը թողնելիս այդ տանը կռուի պատճառ կը ճարի ու սիրտը լաւ

կը հովացնի: Վերջի օրը կանգնեց խեչանին յանդերձնաբար ասեց. «դու գիտում ես, որ տարին լրացել է, ինչո՞ւ վարձս չես տալիս»:—«Հաւ ես առում, որդի, ահա քո վարձը, ստացիր, պատասխանեց ծերը ու փողը լրիւ առաջը դրեց: Ղևոնդը կարծել էր, թէ տէրն իրա պատճառած փեսաների արժէքը վարձից կը հանի, դրանից առիթ կռնենայ կռուելու: Երբ այդ էլ չեղաւ, նոր առիթ գտաւ. առաջը դարսած փողի վրայ բիթն ոլորեց ու դժգոհալով ասեց. «ինչո՞ւ մեծ փողեր ես տալիս, ես սրտեղ մանրացնեմ, բոլորը մանէթանոց տուր»:—«Սիրտդ չեմ կոտրիլ, որդի, ինձ համար միւկնոյն է, ստացիր մանէթանոցներ»: Խեչանի քաղցր վարմունքից Ղևոնդի սրտի մաղձը աւելի շարժուեց, ուստի չարացած խօսեց. «մանէթանոցներն ինչի՞ս են պէտք, տաս շահանոցներ տուր»:—«Աչքիս վրայ, ինչո՞ւ չեմ տալ, ահա քեզ տաս շահանոցներ, հանդարտ ասեց Խեչանը. էլ ուրիշ ի՞նչ ես ուզում, Ղևոնդ»: Ծառան տեսաւ, որ իրա բարեսիրտ տէրն ամեն պահանջները կատարում է, կատաղութիւնից չի մացաւ՝ ինչ անի, ձեռները մեկնեց դարսած փողերին, խառնըշտելով դէս դէն ածեց ու գոռաց. «ահա թէ ինչ եմ ուզում, քեռի Խեչան. ձեռներս կռուելու, կոտորելու համար քոր են գալիս, իսկ դու ինձ ամբողջ տարի տանջեցիր քո տանը խաղաղ պահելով: Անիծուած լինի անկոիւ բանը»:

18. ԽԱՂԱՂԱՍԷՐԸ

Սաքին մի օր գդակն առջևը դրած, նրա հետ

խօսում էր. «այ գդակ, արդեօք շնորհակալ ես
ինձանից, որ միշտ քեզ պատուով եմ պահել,
մինչև օրս չեմ թողել, որ ոքմին քեզ մատով
գիպչի կամ գեանով խփի»: Այս խօսքերը լսեց
հարևան Ղևոնդը պատի միւս կողմից ու ինքն ի-
րան ասեց. «գդակիդ առաջ շատ մի պարծենալ
քեզ ու քեզ, իմ ձեռից մարդ չի ազատուել, շու-
տով քո գլուխն էլ կը ջարդեմ»:

Էգսը ջվարն եկաւ Սաքու գոուը. «Սաքի, ջրի
հերթը քոնն է. գնա արտըդ ջրիը»: Կռուարար
Ղևոնդն այս իմացաւ թէ չէ, բահը վեր կալաւ,
հանդը վազեց: Գնաց հարևանի ջուրը կտրեց,
իրա արտի մէջն արեց: Սաքին եկաւ, ձայն տու-
եց. «Մակի, ախր իմ հերթն է, ինչո՞ւ ես ջուրս
կտրում»:—«Լաւ եմ անում, ձեռիս միջով եմ
գալիս, խօսալդ ինչ է, թէ ուժ ունես, առաջ
արի, հերսոտ աչքերով յարձակուեց Ղևոնդը: Սա-
քին գուշակելով Ղևոնդի միտքը, հանդարտ ասեց.
«աչքի լոյս հարևան, արածիդ դէմ ոչինչ չունեմ,
կարելի՞ է քո արտն աւելի ծարաւ է, քան թէ
իմը, բայց երբ քո արտը վերջացնես, այն ժա-
մանակ ջուրն ինձ կը տամ»:—«Ձէ, չոր կերպով
մանակ ջուրն ինձ կը տամ»:—«Ձէ, չոր կերպով
պատասխանեց Ղևոնդը, նրանից ետ ջրի բերանն
անելու եմ դէպի ցաքուտը, որ փշերը ջրուեն,
փարթամանան»:—«Լաւ, դրան էլ կը համբերեմ,
Ղևոնդ, բայց ցաքիները ջրելուց ետ հերթն ինձ
կը տամ»:—«Ձէ, բարկացկոտ ձայնով ասեց Ղե-
ւոնդը, նրանից ետ ջուրը թողելու եմ, որ գնաց
գետի թաւը թափուի ու աւազը ջրուի»:—«Շատ
լաւ, Ղևոնդ, դրան էլ յօժար եմ, ասեց խաղա-

ղասէր Սաքին, բայց գետի թաւերը ջրելուց ետ
իրաւունք կը տամ, որ բերեմ արտս ջրեմ»: Ղե-
ւոնդն այսչափ համբերութիւն տեսնելով Սաքու
մէջ, ինքն իրան ամաչեց ու հակառակուիլը թո-
ղեց. կռուի պատճառ չը գտնելով բոլոր ջուրը
կապեց Սաքու արտի մէջ ու հառաչեց. «է է,
հարևան Սաքի, դու ինձ յաղթեցիր. ես հաստատ
վճուել էի հետդ կռուել ու գլուխդ ջարդել, բայց
երբ այդքան համբերութիւն ունես, արժանի է,
որ գլուխդ ամենսին չը ծեծուի: Գնա ու միշտ
պարծեցիր գդակիդ առաջ. իրաւունք ունես»:

19. ՄԱՐԴՈՒՆ ՇՈՒՏ ԾԵՐԱՅՆՈՂԸ

Երկու պսակուած եղբայր միատեղ ապրում
էին: Մէկի միրուքն ու գլուխը ճերմակած էր
ինչպէս ձիւն, միւսինը սև էր մնացել ինչպէս
սաթ: Մի օր տանը հիւր ունէին, սիպտակամի-
րուքը թխամիրուքի պատուէրները լսելով հոգում
էր, ինչ որ սեղանին հարկաւոր էր: Հարսներից
մէկը կանգնած ծառայում էր, միւսը խաթուի
պէս տախտին բազմած էր: Հիւրի հետ հաց ու-
տողն ու զրոյց անողը թխամիրուքն էր: Կերա-
կուրը վերջացելուց ետ ձայն տուեց հարսներին.
«ձմերուկ բերէք, կտրենք, բերաններս քաղցրաց-
նենք»: Կանգնած հարսը շտապով գնաց ու մի
ձմերուկ բերեց: Թխամիրուքը նայեց ձմերկին ու
ետ տալով հարսին ասեց. «տա՛ր, փոխիր, ուրիշը
բեր»: Հարսը լուռ ու մունջ ետ տարաւ ձմե-
րուկը ու երկու ըոպէ յետոյ վերադարձաւ մի
ձմերուկ ձեռին: Թխամիրուքը ձեռնահարեց ձմե-

ըսելը ու կրկին դարձրեց հարսին. «տօ՛ր, այս թո՛ղ, ուրիշ լաւ բեր»։ Հարսը դարձեալ անխօս գնաց ու վերադարձաւ մի ձմերուկ ձեռին։ Այս անգամ տան տէրը ձմերուկը կտրեց ու հիւրին համեցէք արեց։ Սուփրէն վեր քաղելուց յետոյ հարսները հեռացան։ Հիւրը նկատելով, որ սիւս-տակամիրութեւնը եղբայրը խոնարհութեամբ սպասաւորում է թխամիրութիւն, իրա մէջ շատ դարմացել էր։ Հետաքրքրութիւնից հարցրեց տանտէրերին. «ձեզանից ո՞րն է մեծ եղբայրը»։ «Ես եմ, բօրեկամ, պատասխանեց թխամիրութեւնը։—«Ի՞նչ պէս թէ դու, մի՞թէ հաւատալի բան է»։—«Եթէ չես հաւատում, եղբօրս հարցրո՛ւ»։ Հիւրը հէնց որ սիւստակամիրութեւնի երեսին նայեց. — «այո՛, դա է մեծ եղբայրը»։ ասեց սա ու կարմրելով դուրս գնաց։—«Հապա ինչո՞ւ քո եղբայրը ծերի դէմք ունի, իսկ դու երիտասարդի, հարցրեց հիւրը թխամիրութիւնին։—«Դրա գլխաւոր պատճառը մեր կնանիքն են։ Եղբայրս ծերացել է իրա մեծասիրտ ու ամբարտաւան կնկայ ձեռից, ես երիտասարդ եմ մնացել իմ խոնարհ ու իմաստուն կնկայ շնորհով»։—«Ի՞նչպէս, բացատրիր, լսեմ»։—«Մի օրինակ բերեմ, բաւական է. տեսնում ես, որ մենք չունենոր օջաղ ենք, այսօր դու եկար մեր տուն հիւր։ Քեզ պատուելու համար ձայն տուի հարսներին, որ ձմերուկ բերեն, փոքր հարսը տեղից չըշարժուեց. իսկ իմ կինը, որ աւագն է տան մէջ, շտապով գնաց, բերեց։ Քո աչքի առաջ հրամայեցի, որ տանի, փոխի, ուրիշ բերի։ Վրնա անխօս երեք անգամ ձմերկի ետնից

գնաց, վերջին անգամ բերածը միայն հաւանեցի ու կտրեցի։ Դու երեւի մտքումդ ասիր, ի՞նչքան ձմերուկ ունեն սրանք իրանց տանը»։—«Ի հարկէ, այդպէս էլ երեւաց»։—«Ընդհակառակը, մեր տանը միայն մի ձմերուկ կար, հէնց այն էլ կտրեցի ու քեզ համեցէք արի»։—«Իմ աչքի առաջ քո կինը երեք ուրիշ ուրիշ ձմերուկ բերեց»։—«Ո՛չ, միևնոյն ձմերուկն էր, միայն իմաստուն կինս դանազան զիրքով էր բռնում, որ իմացուի թէ ուրիշ ձմերուկ է»։

20. ՄԱՆՈՒԿ ԹԱԳԱՒՈՐԸ

Մի պատանի գնաց օտարութիւն, մի քաղաքում կացաւ երկար տարիներ, մեծ հարստութիւն զիւղեց ու մնաց ամուրի։ Ծերութեան մօտ վճռեց հայրենիք վերադառնալ և կարողութիւնն իրա ազգականներին բաժանել։ Զորիները վրայ բարձեց ու ճամբայ ընկաւ։ Երկրի գլխաւորները նախանձեցին, որ օտար մարդն իրանց գանձերը տանում է, մարդիկ ուղարկեցին ետնից և ամբողջ քարաւանը յափշտակեցին ձեռից։ Մարդը վերադարձաւ քաղաք ու գանգատ տուեց մեծ ատեանին։ Դատաւորները գանգատը անուշադիր թողին, որովհետեւ կողոպուտի մէջ մաս ունէին։ Կողոպուտածը մի երկիւղած մարդ էր. տէր ուղորմեան ձեռին միշտ գնում էր ժամ և Աստուծոն բողբոջում մարդկանց անիրաւութեան դէմ։ Մի օր գնալիս երբ մանուկների վէզի խաղալը տեսաւ, իրա պատանեկութիւնը միտն ընկաւ ու լաց եղաւ։ Մանուկի մինը մօտեցաւ լալու պատ-

ճառը հարցրեց: Մարդըն իբրա վիշտը պատմեց: Մանուկն իմաստուն էր, նրան մի խելք սովորեցրեց: Մարդը վեր կացաւ, ուղղակի գնաց թագաւորի պալատը ու ասեց. «Ես քո քաղաքում այսքան տարի չարչարուելով, հալալ քրտինքով հարստութիւն ձեռ բերի: Երբ գնում էի հայրենիք, նախանձոտ մեծամեծները աւագակ մարդիկ ուղարկեցին ետնիցս ու կողոպտեցին: Գնացի քո մեծ ատեանին գանգատ արի, դատաւորներն ինձ դարդակ տեսնելով խօսքիս ուշ չըդարձրին: Այժմ քեզնից, իբրեւ երկրի տիրոջից, խնդրում եմ կամ կողոպտիչներին պատժիր ու ինձնից խլած կալոցութիւնը տուր, կամ իմ երիտասարդութիւնը, որի գնով ձեռ եմ բերել այդ կարողութիւնը, վերադարձրու ինձ»: Թագաւորն այդ միջոցին շատ տխուր էր. հեռու երկրից դեսպան էր եկել ու նրան երեք հարց տուել: Եթէ երեք օրում պատասխան չը գտնէր, պիտի զօրեղ թագաւորի դէմ կռուի դուրս գար: Կողոպտուած մարդու խելացի պահանջը թագաւորին շատ դուր եկաւ. «Ես ուրախութեամբ գողերին կը պատժեմ, եթէ դու այս հարցերին պատասխան կըտաս»: Մարդը տեսաւ, որ իրա խելքի բան չի, լռեց:— «Ուրեմն ասա, թէ քեզ ո՞վ է այս խելքը սովորեցրել, որ ինձնից այդպիսի արդար պահանջ ես անում»:— «Չեմ կարող ասել, պատասխանեց մարդը:— «Տարէք սրան մարագը, հրամայեց թագաւորը: Պալատականները մարդուն գցեցին մարագի մէջ ու դարմանը վառելով մուլ տուին ու դուռ, լուսամուտ փակեցին: Մուլի մէջ խեղ-

դուելուց ազատուելու համար մարդն ասեց մանուկի անունը: Թագաւորի մարդիկ խկոյն գնացին նրա ծնողների տուն ու մանուկին պատուով տարան պալատ: Թագաւորն ասեց. «Իմաստուն մանուկ, օտար քաղաքից ինձ մօտ դեսպան է եկել, նրան պիտի պատասխան տաս»:— «Մանուկի մօտ է եկել, թէ թագաւորի, հարցրեց մանուկը:— «Թագաւորի»:— «Շատ բարի, դէ մի քանի ժամով իշխանութիւնդ ինձ տուր»:— «Ուրախութեամբ, ասեց թագաւորն ու իրա թագը նրա գլխին դնելով գահին նստացրեց: Դեսպանը միւս սենեակից առաջ եկաւ ու այս հարցը տուեց. «Ասա, աշխարհումս Աստուած կ'ա՞յ և եթէ կ'այ, նա քանի անուն ունի»: Մանուկ թագաւորը պատասխանեց. «Դու քանի լեզու որ գիտես, սկսիր նըրանցով համբարել մինչև տասը, միայն աշխատիր մէկանոց չը խառնես. հէնց իմացիր դա գոյութիւն չունի»:— «Առանց մէկանոցի համբարք չի լինիլ, առարկեց դեսպանը:— «Առանց Աստծու էլ աշխարհ չի լինիլ, կ'այ մէկ Աստուած և ունի մէկ անուն»: Դեսպանը երկրորդ հարցը տուեց. «Աստուած ո՞ր կողմն է նայում»:— «Մոմ վառի, հրամայեց մանուկ թագաւորը: Մոմը վառեց:— «Դէ նրա չորս կողմը պտտիր»: Պտտեց դեսպանը վրէժն նայելով:— «Ի՞նչ ես տեսնում»:— «Մի լուսատու մոմ»:— «Աստուած էլ լոյս է, ո՞ր կողմից ուզում ես նայիլ, նա կերևայ քեզ մի լուսատու մոմ»: Դեսպանը երրորդ հարցը տուեց. «Աստուած ի՞նչ գործի է»:— «Միթէ այդ չե՞ս իմանում: Վերկաց, այն զայլսնը բեր այստեղ»:

Դեսպանը խոնարհ ծառայի նման կատարեց նրա պատուէրը:—«Լցրու ջրով, թամբաքի ածա, կրակ դիր վրէն»: Դեսպանը այդ ամենը կատարեց:— «Լսիր այժմ, շարունակեց մանուկ թագաւորը, Աստուած այն բանին է, որ թագաւորին գահից իջեցնում է, ինձ պէս մանուկին այնտեղ բազմեցնում, քեզ պէս դեսպանի ձեռով դայլան է սարքել տալիս ու թէժ կրակը վրէն ինձ համեցէք անել տալիս»: Դեսպանն այս խօսքերից ետ էլ ձայն չըհանեց, ամօթահար վերկացաւ, գնաց:

Թագաւորը սրտի մէջ զգաց իրա անարժանութիւնը, դստնալով պալատականներին ասեց. «Ես այլ ևս չեմ նստիլ այն գահին, ուր բազմած է իմաստուն մանուկը, թող այսուհետեւ նա նստի ու երկիրը կառավարի: Բոլոր մեծամեծները ժողովուած խնդրեցին մանուկին, որ գահի վրէն մնայ: Նա ասեց. «Ժողովուրդը գանգատաւոր է թագաւորից, որ նա կողմնաքաշ է, արդար դատաստան չի կտրում: Իմ կարծիքով՝ անարդար դատելու պատճառը մարդուս աչքերն են, որ գանգատաւորներից մէկին զօրեղ են տեսնում, միւսին գեղեցիկ, երրորդին հարուստ, ևն: Թագաւորը հպատակներին միատեսակ պիտի տեսնի, որ միատեսակ դատի: Եթէ ցանկանում էք, որ ես արդարադատ թագաւոր լինեմ, իմ աչքերը հանեցէք, ինձ կուրացրէք: Մեծից մինչև փոքրը տխրեցին այս առաջարկի վրայ, բայց աշխարհի օգտի համար կատարեցին: Աչքերի լոյսից զըրկուած թագաւորն սկսեց դատաստաններ անել, իրա արդարութեամբ ամենին զարմացնել: Նրա

հռչակը տարածուեց ամեն կողմ:

Աստծու հրեշտակը մի օր ուզեց փորձել նրա իմաստութիւնը, ջորու վրէն նստեց, որ զայնրա մօտ. համբայ գալիս մի պառաւի դռնով անցկացաւ: Պառաւի կովի հորթը կտրեց վզի թոկը և ընկաւ ջորու ետնից: Պառաւն եկաւ, որ ետ տանի, հրեշտակն ասեց. «հորթն իմն է», պառաւըն ասեց. «չէ, իմն է»: Վիճելով գնացին մանուկ թագաւորի մօտ գանգատ: Երկուսի ասածներն էլ լսեց թագաւորը ու նստեց մտածմունքի մէջ ընկաւ: Բաւական մնալուց ետ հրեշտակն ասեց. «Ես ճամբորդ եմ, շտապում եմ, վճիռդ ասա, իմանամ»:—«Ներողութիւն արա, ես քեզանով չեմ զբաղուած, խօսեց մանուկ թագաւորը, ինձ տեղեկացրին, որ ծովի ձկները դուրս են թափուել, ժողովրդի արտերն ուտում են, դրա վրայ եմ մտածում»:—«Այդպիսի բան չի կարող լինի, ասեց հրեշտակը, ձուկը եթէ ջրից դուրս եկաւ, կըսատկի, անկարելի է, որ օդում ապրի և արտ ուտի»:—«Եթէ այդպէս արդար դատել գիտես, հապա ի՞նչպէս ես հաւատացնում, որ հորթը ջորու ձուտն է, չէ՞ որ ջորին անծին է»: Հրեշտակը հիացաւ նրա իմաստութեան վրայ և միջնորդեց Աստծուն, որ աչքերի լոյսը վերադարձնի, որովհետեւ մանուկ թագաւորը վճիռներ տալիս աւելի խղճի ձայնին էր նայում, քան թէ դրսի աշխարհին:

21. ԵՐԵՐ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ

Մարդ ու կին ունէին մի տղայ ու մի կերպ

կառավարւում էին: Կինը միշտ տըրտնջում էր աղքատ վիճակի դէմ. հէնց որ լսեց թէ մարգարէ է լոյս ընկել քաղաքում, մարդուն ու որդուն հետն առած գնաց նրա մօտ ու հարցրեց. «Աստուած երբ պիտի մեզ մի ճար տայ, որ լաւ ապրենք»: Մարգարէն հարցրեց Աստծուն, Աստուած էլ նրան ասեց երազում. «Ինչ բաղդ որ նրանց համար գրուած է, նրանով պիտի բաւականանան»: Մարգարէն այս բանը իմաց տուեց նրանց, բայց կինը դո՛ւ չը մնաց, մարգարէի ոտներն ընկնելով աղաչեց. «սա ի՞նչ բաղդ է, որ Աստուած մեզ բաժին է տուել, աղքատութեան մէջ տապալկում ենք: Գրողն էլ է ինքը, ջնջողն էլ, թող նոր գրի մեր բաղդը»: Մարգարէն միջնորդեց, դրա վրայ Աստուած ասեց. «լաւ, յօժար եմ կատարելու, ինչ որ խնդրեն, թող ընտանիքի ամեն անդամ իրա ցանկութիւնն առանձին ասի, ես կըտամ, որ դո՛ւ ապրեն, էլ քեզ գլխացաւանք չը պատճառեն»: Մարդ, կնիկ, տղայ չըկարացին իսկոյն երեք բան գտնել ու մարգարէին յայտնել, լաւ համարեցին տուն գնալ ու կարգին մտածել:

Փողոցով գնալիս պատահեցին մի փառաւոր հանդէսի. թագաւորի տղէն էր, հարսնացուի հետ գնում էր պսակ: Աղքատ կինը հարսնացուի բաղդին նախանձեց ու իրա սրտի մէջ այսպիսի բան ցանկացաւ. «այ՛, երանի ես լինէի 15—16 տարեկան սիրուն աղջիկ ու այն հարսնացուի տեղը բռնէի»: Այս ասելուն պէս մի լոյս պատեց աղքատ կնկանը ու նրան շինեց աննման գեղեցկուհի, ընտիր, մետաքսէ շորերը հագին: Թագաւո-

րազը մտիկ արեց նրան, ու սիրտը կաւաւ, իրա հարսնացուի թեւ թողեց, վազեց աննման գեղեցկուհու մօտ: Աղքատ մարդը նրա ձեռը բռնած էր, բաց չը թողեց, ասեց. «իմ կնիկն է, չեմ տալ»: Թագաւորազի մարդիկը հասան, աղքատին խիստ անարգեցին, տեսան, որ շատ է ընդդիմանում, ամեն կողմից ծեծեցին: Գեղեցկուհի դառած կինը դէպի երիտասարդ թագաւորազն էր էր վազում: Աղքատ մարդը շատ աղաչեց, որ իրան անմխիթար չը թողնի, կնիկը չը լսեց: Ուստի դառը սրտով այսպէս անիծեց. «երբ ինձ թողում ես այս օրին ու գնում ուրիշի հետ վայելչութիւն քաշելու, խնդրել եմ Աստծուց, խոզ դառնաս»: Յանկարծ գեղեցկուհին փոխուեց, դարձաւ խոզ ու մնաց ծեծուած, ջարդուած մարդու կողքին խըրխըրթալիս: Պատանի տղէն այս տեսարանի վրայ մնաց տխրած, շուարած. սրտի մէջ դիմեց Աստծուն և խնդրեց. «Աստուած, քեզանից ուրիշ բան չեմ ուզում, սիրելի ծնողներին դարձրու այնպէս, ինչպէս որ էին, ես կաշխատեմ ու նրանց իմ վաստակով կը պահպանեմ»: Աստուած սրա խնդիրն էլ կատարեց. դրանով լրացաւ նրանց երեք ցանկութիւնը:

22. ԱՌԻԻԾՆ ՈՒ ՄԱՐԴԷ

Մի առիւծ անտառում ման գալիս տեսաւ մի կատու, նրա ոտին, գլխին նայեց ու ասեց. «այ՛ կատու, դու ամեն բանով ինձ նման ես, բայց հասակով պըստիկ ես, այդ ինչի՞ցն է»:— «է՛, առիւծ թագաւոր, իմ տէրն այնպիսի զօրեղ

արարած է, որ եթէ նրա ճանկն ընկնես, ինձանից էլ կը պատիկանաս:— Այդ ո՞վ է, որ ինձանից էլ զօրեղ է, մոլորչաց առիւծը անեղօրէն, գնանք նշանց տուր այդ արարածին, որ ատամներին ուժը ցոյց տամ»: Կատուն առիւծին առաջնորդեց դէպի անտառի խորքը, ուր մարդը, կացնով հաստ գերան էր ճղատում:— «Բարով, այ աղամորդի, ասեց առիւծը:— «Ասածու բարին, առիւծ թագաւոր»: Առիւծը բաշը թափ աալով խօսեց. «դու ի՞նչ անհոգի արարած ես, որ իմ ցեղակից կատունն այս օրն ես գցել: Սա իմ չափ պիտի լինի, բայց քո ձեռի տակ այսպէս նուազ է մնացել: Մարդը տեսաւ, որ զայրացած առիւծի հետ համով խօսել չի լինիլ, խելքը բան գցեց. «մեղայ քո առաջ, հօր թագաւոր, ասեց մարդը, կացինս գերանի մէջն է, սեպ է պէտք, նեղութիւն քաշիր զօրեղ թաթերով բռնիր ճութերը, որ ճղածը չը միանայ, ես կացնով սեպ շինեմ, գերանի մէջ դնեմ, յետոյ հարցիդ հանգիստ պատասխան տամ»: Հպարտ առիւծի գլուխը չը վերցրեց, որ անգոր մարդու առաջարկից հրաժարուի, խիզախաբար մօտեցաւ գերանին ու հաստ թաթերը ուղղակի գերանի ճեղքի մէջ դրեց: Մարդը կացինը հանեց, նստեց մի կողմ, սրոցը վեր կալաւ ու սկսեց ծանր ու բարակ կացնին քսել: Ահագին գերանը իրա մէջ առած առիւծի փափուկ թաթերը սարսափելի սղմում էր: Առիւծը յայտնի չարեց թէ մատները մըղկըտում են: Յաւը մատներից անցաւ հերին, այնտեղից ամբողջ մարմին: Առիւծը ծածուկ

տնքում ու ծմրում էր, բայց թագաւորական աստիճանից ամաչելով մի կերպ կսկիծին դիմանում էր: Բայց երբ թաթերի ցաւը սրտին հասաւ, քիչ մնաց ուղքից գնար: Մարդն անողորմ կտրուած տեղից չէր շարժւում: Առիւծը սաստիկ կըսկիծից կուչ եկած արտասուելով դիմեց կատուն. «այ ցեղակից, եթէ տէրը ինձ քո չափ պատիկացնի, գոնէ այն ժամանակ բաց կը թողնի»:— «Հաստատ չեմ իմանում, ի՞նչ ասեմ, առիւծ, բայց ինչպէս նրա ծանր ու բարակ սրելը տեսնում եմ, մեծ պատուը ականջդ է թողելու»:

23. ԵՐԵՍՊԻՆԴԻ ՀԻԻՐ

Մարդ ու կնկայ մօտ բարեկամներից մինը հիւր եկոււ և ապրեց նրանց տանը մի ամիս, երկու ամիս ու երեսը պնդացրած ուզում էր դեռ էլի մնայ: Մարդ ու կին զգուած նրա ներկայութիւնից՝ մտածում էին մի կերպ հեռացնել, բայց չէին ուզում հասկացնել թէ ուժով եւ դուրս անում: Նրանք ծածուկ խորհուրդ արին ու իրար հետ կռուեցին: Հիւրը դուրսն էր, հէնց որ դրանց աղմուկը լսեց, ներս մտաւ ու մարդուն յանդիմանեց. «ամօթ չէ, որ կնկանդ ծածում ես»: Մարդն իրան արդարացնելու համար ասեց. «այ բարեկամ, քո էգուցուայ գնալիք ճամբէն վկայ, ես իսկի մեղաւոր չեմ, ծռնութիւնը իմ կնկայ մէջն է»: Կնիկն էլ իրան պաշտպանելու համար միւս կողմից վրայ բերեց. «աչքի լոյս հիւր, քո էգուցուայ գնալիք ճամբին հաւատա, ես մեղ չունեմ, մեղաւորութիւնը իմ մարդու մէջն

է: Հիւրը գլխի ընկաւ, իմացաւ նրանց կռուի նպատակը. կամենալով հասկացնել թէ դեռ միտք չունի այդպէս շուտ գնալու, ձեռք մեկնեց տանը դրած ալիւրի լիք կթոցին և ասեց. «այն կթոցի ալիւրը վկայ, որ այս ձմեռ իրար հետ պիտի ուտենք, ձեր կռուից բան չի դուրս գալ, զուր էք իրար ջարդում»:

24. ՔԷՉ ԷՆ ԶԻ ՄՆԱԼ

Մի թագաւոր պալատից հեռանալիս պարտիզպանին պատուիրեց. «նայիր, որ պարտէզի լարդը անարատ մնայ սոխակից, սոխակն անջնաս մնայ օձից: Եթէ մինչև իմ վերադարձը դրանց գլուխը փորձանք գայ, վայ քեզ»: Պարտիզպանի բունը կտրուեց, գիշեր ցերեկ արթուն մնում էր. որ սոխակը վարդին չը փետի, օձը սոխակին չը խեղդի: Բայց մէկ օր քնից յաղթուելով աչքը խուփ արեց, Յանկարծ դարձելով տեսաւ՝ սոխակը վարդին փետած, օձը սոխակին խեղդած: Պարտիզպանն ասեց. «վարդն ու սոխակը գնալուց ետ թագաւորն իմ գլուխը ուսերիս վրայ թողելու չի, աւելի լաւ է, օձի գլուխը ջարդեմ, հանգստանամ»: Բանը վերցրեց, որ սպանի, օձն ասեց. «վարդի «ախ»ը սոխակին չը մնաց, սոխակի «ախ»ը ինձ չը մնաց, իմ «ախ»ն էլ քեզ չի մնալ, այ պարտիզպան».— «Անիծել եմ քեզ էլ, քու «ախ»ն էլ, ասեց պարտիզպանն ու օձին սպանեց:

Թագաւորն ուր գնացել էր, վերադարձաւ պալատ ու պարտէզ մտնելով ոչ վարդ տեսաւ, ոչ սոխակ և ոչ օձ:— «Պարտիզպան, գոչեց թա-

գաւորը, ուր են քեզ պահ տուած բաներս».— «Թագաւորն ապրած կենայ, երկուր ժամանակ հսկելուց ետ քունս տարաւ, վեր կացայ, տեսայ՝ սոխակը վարդին է փետել, օձը սոխակին է խեղդել, ես էլ օձին սպանեցի».— «Ախ, անիրաւ, գոչեց թագաւորը, ի՞նչպէս ես համարձակուել: Արժան չէ, որ քեզ դահճի բերան գցեմ».— «Թագաւոր, խօսեց պարտիզպանը, վարդի «ախ»ը սոխակին չը մնաց, սոխակի «ախ»-ը օձին չը մնաց, օձի «ախ»ը ինձ չը մնաց, իմ «ախ»ն էլ քեզ չի մնալ».— «Անիծել եմ քեզ էլ, քու «ախ»ն էլ, ասեց թագաւորն ու գլուխը կտրել տուեց:

Բայց չը քաշեց շատ ժամանակ, մէկ կտրիճ թագաւոր վեր կացաւ, եկաւ այս թագաւորի վրայ կռիւ, խփեց, ամեն ինչ ձեռից խլեց ու ժողովրդի հետ իրան էլ դերի տարաւ.— «Այո, պարտիզպան, քու «ախ»-ն էլ ինձ չը մնաց, գոչեց տխրութեամբ թագաւորը:

25. ԻՄԱՍՏՈՒՆ ԲՈՒ

Սողոմոնն իր կանանցից մէկին չափազանց սիրում էր: Այդ կնիկը ցանկացաւ, որ թագաւորն իրա նորածին մանուկի համար թռչունների ոսկորներից օրօրոց շինել տայ, որպէս զի վերցնելիս թեթեւ լինի: Թագաւորի հրամանի վրայ բոլոր թեաւորները հաւաքուեցին պալատ: Չերեաց միայն բոռ բուն: Մի քանի անգամ ապսպրեցին, չեկաւ. վերջը վեղիւրը գնաց համոզելով բերեց: Սողոմոնը շատ վշտացած էր անուշակալ բոռ բունից. «Լսիր, մեծամիտ թռչուն, քեզ մի քանի բան

պիտի հարցնեմ, եթէ պատասխան չես տուել, այն ժամանակ վա՛յն եկել է գլխիդ»։— «Աչքիս վրայ» թագաւոր, ասա հարցերդ, լսեմ, խօսեց բոռ բուն։ — «Աշխարհի վրայ շէնն է շատ, թէ աւերակը»։ — «Աւերակը շատ է, թագաւոր, որովհետեւ ինչ որ քանդուած է, աւերակ է, իսկ շէնն էլ ժամանակով աւերակ պիտի դառնայ»։ — «Այդ իմացար, երկրորդ հարցիս պատասխանիր. մեռածն է շատ, թէ կենդանը»։ — «Ի հարկէ մեռածը, որովհետեւ մեռածն արդէն մեռած է, կենդանն էլ ժամանակով կը մեռնի»։ — «Լաւ, այժմ երրորդ հարցիս պատասխանիր. կնանիքն են շատ, թէ մարդիկը»։ — «Ի հարկէ կնանիքը շատ են, թագաւոր, որովհետեւ կնիկարմատ ծնուածն արդէն կնիկ է, իսկ տղամարդկանցից ով որ կնկայ խելքով է ժաժ գալիս, նա էլ կնկահաշիւ է»։ Սողոմոնը վերջին խօսքերի վրայ կարմրեց, հասկացաւ, որ ինքը շատ սխալուած է կեկայ ամեն անտեղի ցանկութիւնը կատարելով։ Անուշակալ թռչունին պատժելու տեղ մեծ պատիւ տուեց և ասեց. «այսօրից դէն ոչ ոք չի համարձակուիլ քեդ կանչել «բոռ բուն», այլ պիտի ասեն «իմաստուն բուն»։ Եւ յետոյ հրամայեց, որ սիրելի կնկայ ցանկացած օրօրոցը՝ շինեն հասարակ փայտից և ոչ թէ թռչունների ոսկորներից։

26. ՍՈՂՈՄՈՆՆ ԵՒ ՄՐՋԻԻՆԸ

Սողոմոնն այնպէս իմաստուն էր, որ բոլոր թռչունների լեզուն հասկանում էր։ Երբ թագաւորական գահ բարձրացաւ, ամենն էլ՝ չորքոտա-

նիք, թռչուններ, ձկներ, միջատներ ընծաներով եկան նրա գահակալութիւնը շնորհաւորելու։ Ամենն էլ կարգով շարուեցին։ Բոլորից վերջը լոյս ընկաւ մըջիւնը. բերանում բռնած, ընծայ էր բերում ճպուռի ազդրը. այդ անագին բեռով բարձրացաւ գահը, այնտեղից էլ Սողոմոնի ձեռի երեսը և իրա ընծան դրեց այնտեղ։ Իմաստուն թագաւորը նայեց օրտնքում մտած փոքր միջատին, նրա վերցրած մեծ բեռանը ու ժպտալով հարցրեց. «ես եմ մեծ, թէ դու»։ — «Իհարկէ որ ես, պատասխանեց մըջիւնը»։ — «Ինչպէս»։ — «Ահա թէ ինչպէս. առաջինը՝ դու թէպէտ իմաստուն թագաւոր ես, բայց նստած ես այնպիսի գահի վրայ, որ բեզանից քիչ արժէք ունի, իսկ ես, որ չնչին միջատ եմ, անա բազմած եմ քեզ պէս թագաւորի վրայ, որ ընդարձակ աշխարհի կառավարիչ է։ Երկրորդ՝ եթէ մէկը համարձակուում է քո կամքի հակառակ բան անել, իսկոյն հրամայում ես նրան պատուհասել, իսկ ինձ՝ ինչքան էլ վըտացնում նեղացնում են, բոլորին էլ համբերում, ներում եմ։ Վերջապէս երրորդ՝ ուրիշ մարդկանց պէս դու եթէ մի քանի ժամ աշխատում ես, երկու այնքան հանգստանում ես, իսկ ես ամբողջ կեանքս անց եմ կացնում աշխատանքի մէջ ու չեմ իմանում՝ ի՞նչ բան է հանգստութիւնը կամ յոգնութիւնը»։

26. ԱՂՈՒԷՍԻ ՈՒՐԲԱԹԸ

Մի աղուէս գնաց այգիները խալող ուտե-

լու: Շատ դէս դէն ընկաւ, քընթեռներէց աւելի բան չը գտաւ: Քաղցած հեռանալիս չափարի մէջ մի ծակ տեսաւ ու նրա առաջ մի մսի կըտոր: Աղուէսի տէքերն ուրախութիւնից ջրակալեցին. թուքը կուլ տալով վրայ ընկաւ, որ շուտով մսի կտորը չանթի, աղիքները հովացնի, նրա չար բաղդից մի բան չըրթաց ու նրա ոտը ամուր բռնեց:—«Այս ինչ սլատուհաս էր, որ գլուխըս եկաւ, ասեց աղուէսն ու եռանդով ծուլ ծուլ եղաւ, որ ոտը պըծացնի, զուր անցաւ: Նորից սկսեց չարչարուել, որ ոտը հանի, բայց հնար չեղաւ: Քիչ էր մնում նեղութիւնից սիրտը տրաքուի: Այս վատ վիճակում էր, երբ այգետէրը լոյս ընկտաւ: Աղուէսը ճարահատած գետնին փռուեց, աչքերը ետ պարզելով սուտմեռնուկ տուեց: Այգետէրը նրան մեկնուած տեսնելով գլուխը թափահարեց. «ճի, անիրաւ, վաղօրօք շունչ փչել ես, չես դիմացել, որ ողջ-ողջ գցեմ շնորիս բերանը»: Թալակի միջից հանեց ու զրըխկալէ գետնով խփեց ու ասեց. «Գրողի տարած, սպասիր, թալակը սարեմ, տանելու եմ բեզ ծախ, ճրագլուսի գին էլ է կը դառնաս»: Այգետէրը երեսը շուռ տուեց թէ չէ, աղուէսը սուս փուս տեղից վեր թռաւ ու պոճկ փախաւ: Թալակը սարելով ետ նայեց այգետէրը, տեսաւ աղուէսը չը կայ: Ա՛խ ու վի՛շ անելով խօսեց, «վայ դու գետինը մտնես, սուտմեռնուկ աղուէս, այս ի՞նչ օյին եկար գլուխս»: Կատարը քորելով գնաց տուն:

Մեր աղուէսը փախչում էր, անա դէմն ելաւ

մի գայլ ու հարցրեց. «Սանհէր աղուէս, բարի լինի, այս ո՞ւր ես վազում»:—«Բարի չեղած ի՞նչ պիտի լինի, հարևանս դու ես, քեզ մօտ էի վազ տալիս, այստեղ մօտիկ մի լաւ որս եմ գտել ու...»:—«Հ՛ր ի՞նչ, ասա, սանհէր: Եօթն օր է, աղիքներս բաղցից կտրատում են, թէ ճար գիտես, օգնիր, մեռնում եմ»:—«Այնպիսի համեղ միս եմ գտել, որ սրտիս ջուրը նրա համար զրնում է, բայց անի տես, որ այսօր ուրբաթ է, աղուէսներս համար պաս է»:—«Հաւատում եմ, սանհէր, ամենը գիտեն, որ դու միս ուտելուց խամ չես»:—«Գնանք, գայլ աղբէր, քո լաղճն է, դու անուշ արա»:

Գնացին հասան այգուն, «տեսնո՞ւմ ես չափարի միջի միսը, հարցրեց աղուէսը: Գայլը պատասխանելու տեղ կրակուած գլուխը մեկնեց, որ միսը շուտ պոկի, յանկարծ մի չըթոց լսուեց ու թալակն ընկաւ գայլի վիզը, իսկ մսի կտորը թռաւ աղուէսի առաջը: Փորձանքի մէջ ընկած միամիտ գայլը ծուլ եղաւ դէս, ծուլ եղաւ դէն, թալակից չաղատուեց, ճարահատած աղուէսին աղաչեց, որ մի հնար սովորցնի:—«Գայլ աղբէր, ասեց աղուէսը, այգետէրի մահակից ազատուելու համար ուրիշ կերպ բան մտածիր, թէ չէ այդպիսի ծլունգներ առաւօտը ես փորձել եմ, բոլորն անօգուտ, զո՛ւր»: Այս ասելուց ետ աղուէսը ըռխեց մսի կտորը և սկսեց ուտել:—«Սանհէր աղուէս, յուսահատ գողաց գայլը թալակի միջից, այդ ի՞նչ ես անում, չէ՞ որ դու ասիր, այսօր աղուէսներդ համար ուրբաթ է, պաս է»:—«Է՛,

խելքի աղքատ, ուրբաթն այդ է, որ վիզդ ընկած է:—Ասեց աղուէսն ու փորը կուշտ հեռացաւ:

28. ԳԻՏՈՒՆ ՄՈՂԼԷՆ

Շահի մոլլէն իրա գլուխը գովելով հաւատացնում էր, որ ինքը ոչ միայն աշխարհի տակ ու գլուխը գիտէ, այլ և իմանում է. թէ Աստուած երկնքում ի՞նչ բանի է, ո՞ր է ման գալիս, երբ է հաց ուտում են: Շահը կամեցաւ նրա ասածներն ստուգել, մարդ ուղարկեց Հայոց հոգևոր Տէրի կուշտը ու մի իմաստուն վարդապետ ինդրեց, որ գայ մոլլի հետ մրցի: Մի ճարտար վարդապետ իրաւունք ստացաւ, գնաց շահի դուռը և էլ ղաշի վրայ նստեց. «Իմաց արէք շահին, ասեց վարդապետը, որ ես Հոգևոր Տէրի կողմից եկել եմ նրա մոլլի հետ մրցելու»: Շահը պալատ կանչեց մոլլին ու վարդապետին և իրար դէմ նստացրեց, որ խօսելով մրցեն: Ինքը գահի վրայ նստեց, որ ականջ դնի: Վարդապետն ասեց. «եղբայր մոլլա, ճամբից նոր եմ եկել, քաղցած եմ, լաւ կըլինի առաջ մի բան ուտենք, յետոյ մեր երկար զրոյցն սկսենք»:—«Համաձայն եմ, եղբայր վարդապետ, ուտել ես կամենում, ուտենք. սիրտդ ի՞նչ է ցանկանում»:—«Կաթը, մածունը ամենից մարսական կերակուրներն են, ես առաջարկում եմ կամ այն բերեն կամ այն, ասեց վարդապետը:—«Մածունն աւելի լաւ է, ասեց մոլլէն: Շահի հրամանի վրայ մի մաթրաթ մածուն բերին: Երկու հոգևորականներն էլ հացը

վերցրին ու մածնի մէջ բրդեցին: Մոլլէն գդալով խառնեց բրդուշը և ուղեց ուտել, վարդապետը նրա բաղկիցը բռնեց. «սպասիր, մի պայման եմ առաջարկելու»:—«Ասա, լսում եմ պայմանդ, պատասխանեց մոլլէն:—«Պայմանս այն է, որ իմ բրդած հացին չը դիպչես, քու բրդածն ուտես»:—«Ի՞նչ ես ասում, խելառ վարդապետ, մածնի մէջ բրդուշը խառնուել է, ես ի՞նչ իմանամ թէ իմ բրդած կտորը ո՞րն է»: Վարդապետը թոյլ չը տուեց, որ մոլլէն լեզուն երկարացնի, կողքին դրած գաւազանը ձեռը կալաւ, տնւր մի կըտանս զիտուն մոլլի մէջքին, կողքերին ու բարկանալով ասեց. «այ մոլլա, դու որ չես կարողանում առաջդ դրած մաթրաթից քո բրդածը ջոկել, ուրեմն ի՞նչպէս ես համարձակուում ասել թէ Աստուծու բոլոր գործողութիւնները երկնքում տեսնում, իմանում ես»: Շահը իրա գահի վրայից ուրախացած ձայն տուեց, «խփիր, քեզ մատաղ, վարդապետ, շատ տեղն է, անխրաւը քիչ էր մնում ինձ էլ ճամբից հանի»:

29. Գ Զ Ր Ա Ր

Մի մարդ բուրդ ունէր, բայց գգելու, մաքրելու հանգը չըգիտէր: Փայտից անեղ էր շինել, աղիքէ լար կապել նրա ծայրին: Առաջը թափուած բրդի վրայ անեղը բռնելով լարին չաքով լսփում էր ու գէպ իրան քաշում: Լարը դնգում էր, բուրդը իրանով փաթաթում, բայց չէր պոկում, որ գգուի: Ամեն մի վայրկեան մարդը ձեռից չաքը

վէր դնելով՝ լարից բուրդը քաղում էր ու բարկանալով ուշուկները թափում սատանի գլխին։ Մարդու գուր չարչարանքը տեսնելով սատանէն լոյս ընկաւ ու ասեց. «Դու խելօք մտածելը չես իմանում, ինձ ես մեղադրում։ Ահա եկել եմ օգնելու, ի՞նչ կը տաս, որ բեզ հնար սովորցնեմ, առանց չարչարուելու բուրդը գզես»։— «Ձեռովս ինչ որ գայ, կը տամ»։ — «Քեզանից շատ բան չեմ ուզիլ։ Առաւօտից մինչև իրիկնաժամ ինչքան գզես իմ սովորեցրած հանգով, բեզ լինի, նրանից ետ ինչ որ գզես՝ ինձ»։— «Յօժար եմ, ասա հնարը, տեսնեմ՝ ի՞նչ է անեղիս պակասութիւնը, որ բուրդը խամ է մնում»։— «Գործիքդ թերի է, խօսեց սատանէն, պիտի լրացնել։ Ամենից առաջ անեղի ծայրին կաշի քաշիր, որ լարը մշտական բսուելով չը մաշուի, դրա անունը դիր գլխանի։ Երկրորդ՝ անեղի ծանրութիւնից չընեղանալու համար թելով մի ճիւղոտի ծայրից կախ տուր, թող անեղը օդում կախուած մնայ, դրա անունը դիր կախան։ Գզելու ամենագլխաւոր յաջողութիւնը մի փոքր բանից է կախուած. անեղի տախտակի գեահի վրայ մի բարակ կաշի մեկնիր, դրա տակ գլանաձև ոլորած կաշի դիր, որ լարը դրա վրայ կանգնի, տախտակին չըդիպչի։ Չաքով լարի մէջտեղը խփելիս լարի ծայրը այդ ոլորած կաշուն դու կըտայ ու տըզգալով կը հեռացնի իրանից փաթաթուած բուրդը։ Դրա անունը դիր տըզգան»։

Սատանի ասածը մարդը կատարեց և բուրդ գզելը շատ սիրուն յաջողուեց։ Գորարն սկսում

էր առաւօտից աշխատել, հէնց որ ժամի զանգակները խփում էին, ձեռի գործն իսկոյն թողում էր, չէր բանում, այդպիսով սատանին բաժին չէր հասնում։ Սատանէն չէր էլ նեղանում։ Այդ վարպետը շատ աշակերտներ ունեցաւ, ամենին խիստ պատուէր տուեց, որ երեկոյեան զանգի ձայնը լսելուն պէս ձեռների գործը թողնեն ու գնան մարդավարի հանգստանան իրանց տանը, որ առաւօտը նորից եռանդով բուրդ գզեն։ Գորարների մեծ մասը վարպետի այդ աւանդը հաստատ պահեց ու ազնիւ մնաց։ Բայց եղան այնպիսիներ էլ, որ զանգերը խփելուց ետ բանում էին ու երբ սատանէն լոյս էր ընկնում, ուրսնում էին թէ չենք աշխատել։ Իրանց մէջ ասում էին. «սատանին ինչո՞ւ բաժին տանք, աւելի լաւ չէ՞ գնանք գինեւուն, մի լաւ կոնծաբանելով ուրախանանք»։ Այդպիսի անազնիւ գրգռարները գործը թողելուն պէս գնում էին գինեւան մէջ նստում։ Սատանէն էլ մտնում էր նրանց ետնից, հետները նստում, թեժացնում գինու ծարաւը, գլուխները տաքացնում, իրանից խլած բաժնի հետ նրանց ամբողջ օրուայ վատակն էլ մսխել էր տալիս ու յետոյ թողում, որ հարբած զրութեամբ գնան տները։

30. ԱԶՔԱԾԱԿԻ ՊԱՏԻԺԸ

Վաճառականի հետ խանութի ընկեր դառաւ մի ծեր դերվիշ, որ ինչ դատեն, հաւասար կէս անեն։ Վաճառականը ազահ էր, միշտ ծածուկ

դէպ իրան էր քաշում: Դերվիշի նպատակն էր նրան անչափ շահասիրութիւնից ետ կացնել, քաղցրութեամբ խրատում էր, որ գիշեր ցերեկ աչքը փողի վրայ չը պահի, մի քիչ էլ հոգու վրայ մտածի, բայց նրա աչքը ծակ էր, էլի իրան էն էր քշում:

Ժամանակից ետ գերվիշը ծանր հիւանդացաւ և առողջանալու յոյս չը կար: Այդ միջոցին վաճառականը կարեոր գործով պիտի ուրիշ տեղ գնար. որդուն մի կողմ կանչեց և այս պատուէրը տուեց. «Ուշ դարձրու, քանի որ հիւանդ է. եթէ մինչև իմ գալը կը վախճանուի, լաւ պատուով կը թողես, բայց ձեռի մատանին անպատճառ մատից կը հանես, որ ինձ տաս»: Վաճառականը գնաց իրա գործին: Դերվիշը տղին կանչեց իրա մահճակալի մօտ և հարցրեց. «հայրդ ի՞նչ ասեց քեզ»: «Պատուիրեց որ եթէ վախճանուես, պատուով թողեմ»: «էլի ուրիշ ի՞նչ ասեց»: Երիտասարդն ամաշում էր վերջի կտորն ասել, բայց գերվիշն այնքան թախանձեց, որ ամենն ասեց: «Իէ, լսիր, խօսեց գերվիշը, հօրդ հետ խանութում ինչ որ բաժին ունեմ, բոլորն ընծայում եմ քեզ, ինձ համար պահում եմ միայն այս մատանին և խնդրում եմ, որ հետս թողես: Եթէ իմ մատից հանես, սեբեհս դաս այն կեանքը»: «Միամիտ կաց, բարի գերվիշ, քո մատանին կը մնայ մատիդ. մէկի տեղ եթէ վեց հայր պատուիրած լինի, դարձեալ չեմ հանիլ»: Դերվիշը վախճանուեց, երիտասարդը պատուով թողեց, թանկագին մատանին էլ հետը: Վաճառականը մա-

հուան լուրն տանելով գործը կիսատ թողած վերադարձաւ տուն: «Որդի, դերվիշին թաղեցիր, մատանին ո՞ւր է, հարցրեց նա: «Թաղեցի հետը»: «Վայ քու մէջքը չը կտորի, այդ ի՞նչ ես արել, անիմա տանու ակը անգին քար է, երկու տարի չարչարուեմ, նրա գինը չեմ աշխատիլ: Զուր ես հողի տակ դրել, բահ ու թի վեր կալ, գնանք գերեզմանի կուշտը: «Հայր, ինչի՞դ է պէտք մատանին, ինչո՞ւ բարի գերվիշին անհանգիստ ես առում գերեզմանում: Մայրս քո ունեցածով էլ բաւական է, իսկ ես գերվիշի ընծայածով արդէն հարուստ եմ, քեզից ոչինչ չեմ ուզում»: «Ուշ լաւ ես, որդի, անգին մատանու արժանիքն ի՞նչ կը հասկանաս, անի գերեզմանի տեղը ցոյց տուր: Որդին ճարահատած ցոյց տուեց ու տխուր կանգնեց, իսկ հայրը վերևի շորերը հանեց, բահով վռազ վռազ հողը քանդեց, թիով դուրս ածեց, շուտ հասաւ գերեզմանի տակին, բայց գերվիշի մարմինը չը գտաւ. նայեց տեսաւ՝ կողքից մի ծակ. այդ որդի, գերվիշն այս տեղով փախել է, դու սպասիր այստեղ, շորերս պահիր, ես գնամ նրա ետին»: «Այ հայր, այն գերվիշը քեզ բան չի պարտ, ինչո՞ւ ես ետևից ընկնում: Կարելի է հրեշտակ էր, քեզ փորձելու էր եկել: «Դու յիմար ես, որդի, անգին քարի արժէքը չես հասկանալ, ասեց ու շապկանց, գլխաբաց ճամբայ ընկաւ գետնի տակով, որ գնայ գերվիշին մենակ գտնի, ուժով մատանին խլի: Շատ ու քիչ գնալն Աստուած գիտէ, վերջապէս աչքը բաց արեց, իրան տեսաւ գերվիշի առաջ: Դերվիշը

շուրջ-բոլոր հրեշտակները ծըվըլալէ երգում էին, նա էլ արքայութեան մէջ նստած ականջ էր դնում:— «Բարով քեզ, ընկեր դերվիշ», խօսեց վաճառականը:— «Աստծու անհատ բարին քեզ, ընկեր վաճառական, այս ի՞նչպէս ես այստեղ ընկել: Ես միսըս հալեցի, ոսկորս մաշեցի, հազիւ կարացի այստեղ հասնել, դու ինձանից ետ ի՞նչ մեծ վարձք ես արել Աստծու առաջ, որ ոտըդ, ձեռքդ արձակ, աչքդ բաց շուտ հասել ես իմ աստիճանին: Դէ, համեցէք նստիր»: Լուսով պատած դերվիշը երեք անգամ առաջարկեց, վաճառականը չը նստեց. աչքը շարունակ մատանու վրայ էր:— «Ինչո՞ւ ես եկել, որ չես նստում»: Ագանք պատճառ մտածեց և ասեց. «կարօտել էի քեզ, եկայ տեսութեան, հիմի կը գնամ»:— «Խեղճ մարդ, խօսեց դերվիշը, բաւական չէր, ինչքան խաբել էիր այն աշխարհում, այստեղ էլ սուտ հնարեցիր, թէ ինձ մօտ եկել ես կարօտըդ առնելու համար»: Մատանին հանեց ու մեկնեց. «քո ուղեւիքն այս է, ագան հողածին, ան, տան, բայց աչքդ դըրանով չի կշտանալ»: Վաճառականն առանց ամաչելու ուրախ ուրախ մատանին վերցրեց, բռնան մէջ սղմած ետ դառաւ: Արքայութեան լընակիչները նրանք էին, որոնք մեր աշխարհում զրկանքներ էին կրել: Յանկարծ վաճառականի շապկից մէկը պինդ բռնեց. «ճէր ես գնում, տանըդ համար երկու գրվանքայ եղ առար ու կուպէկ չը տուիր. լաւ ես պատահել, պարտքդ տուր»:— «Մօտս փող չունեմ, բաց թող, գնամ, բերեմ»:— «Ձէ, եթէ բաց թողնեմ, էլ չես դալ, գնանք դա-

տաւորի մօտ, բաւական էր, ինչքան այն կեանքում ինձ խաբեցիր»:— «Երկու գրվանքայ եղ է, մեծ բան չի, ի՞նչ ես քաշ տալիս, նեղացաւ վաճառականը: Այդ ըսպէին մի անեղ ձայն ընկաւ նրա ականջով, «պարտքը պարտ է, մեծ ու փոքր չըկայ, երբ չես տալիս, պիտի մտնես դժոխք»: Ազրայիլն էր խօսողը. Դժոխք խօսքը վաճառականի ոտն ու ձեռք կտրեց. դողդողալով բռն մատանին մեկնեց պարտատէրին, «անա այս մատանին թող մնայ քեզ մօտ, մինչև գնամ տանիցս փող բերեմ»:— «Այդ մատանին ուրիշի ապրանք է, բո պարտքի տեղ չի բռնիլ, ասեց Ագանքայիլը ու վզից քաշելով տարաւ դատաւորի մօտ. որի բերանից դուրս եկաւ այս վճիռը. «վաճառականին տարէք դժոխքը ու գլխի վէր կախ արէք կրակում, նրանից կաթած եղը մսխալ մսխալ հաւաքեցէք. հէնց որ երկու գրվանքէն լրանայ, բաց թողէք»: Վաճառականին տարան. դժոխքի պատիժը քաշելուց ետ սա եկաւ գերեզմանի ծակով դուրս եկաւ: Ոչ որդին կար, ոչ հագուստը. քաղաք մտնելիս ով հանդիպեց նրան, քիթը բռնած փախաւ. դժոխքի գէշ հոտ էր գալիս նրանից, ոչ որ մօտը չէր կանգնում. Հասաւ իրա տուն. այնքան պատկերով փոխուել էր, որ կնիկն ու որդին նրան չը ճանաչեցին: Վատ հոտից զզուելով հարցրին. «Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում»:— «Ես այս տան գլուխն եմ»:— «Ձէ, մեր տան գլուխը վաղուց գնացել է այն կեանքը դերվիշի ետնից, հեռացիր, վատ հոտըդ քաշիր»: Վաճառականին խռկեցին տանից: Մի նզովուած գայլ կար. բաղդը

կապուած եօթ տարի սոված ման էր գալիս: Նը-
րան ասին. «Եթէ այս ինչ վաճառականի գլուխն
ուտես, բաղարդ կը բացուի»: Գայլն ուրախ վա-
զեց դաշտը և յարձակուեց թափառող վաճառա-
կանի վրայ, որ ուտի: Հէնց որ դժողքի գէշ հոտը
քթովն ընկաւ, շշմուեց: Երբ ուշքի եկաւ գայլը,
ասեց. «Եթէ եօթ տարի էլ ուրիշ կապուած մնայ
բաղդս, ես այդ գարշելի արարածին չեմ մօտե-
նալ»:



Ժերերից ամենափորձուածը ընկերներին ասեց

Երեք եղբայր ունէին 30 ծանրած ոչխար. ամենն
էլ ծնեցին. 10 հատը ամեն մինը 3-ական գառը: 10
հատը 2-ական գառը: 10 հատն էլ մի մի գառը: Նրանք
ուզում էին ոչխարը երեք հաւասար մաս անել, բայց
չը գիտէին ճիշդ անել, որ ամեն մի մայր իրա գառնի-
րի հետ մնայ:

Մի մարդ ձեռին փող ունէր, ասեց. «Եթէ այսքան
էլ ունենամ, աղքատի 24 կոպ. կը տամ»: Ստացաւ
և տուեց, Յետոյ ասեց. «Ինչոր մօտս մնաց, եթէ այդ-
քան էլ ունենամ, էլի 24 կ. կը տամ աղքատի»: Ստա-
ցաւ ու տուեց: Յետոյ ասեց. «Ինչքան որ մօտս կ'ույ,
եթէ այդքան էլ ունենամ, էլի 24 կ. կը տամ աղքա-
տի»: Ստացաւ ու տուեց, բայց իրա մօտ էլ բան չը
մնաց: Դէ իմացէք թէ մարդն սկզբում ի՞նչքան փող
ունէր:

Մեր աշխատութեամբ տպագրութեան համար
պատրաստ են

1. Աշակերտի յիշատակարանը, Էդ. Ամիչիսի,
պատկերազարդ, թարգ. գերմ.:
2. Զսան ընտրովի հէլիաթ, Գրիմմից, պատկե-
րազարդ, թարգ. գերմ.:
3. Էմ. Կանտի կենսագրութիւնը, քաղուած գեր-
ման. աղբիւրներից:
4. Թէոդոր Փեխներն իբրև մտածող և բարո-
յախօս:
5. Ի՞նչ է կրօնը, ուսումնասիրութիւն:
6. Ժերերի գրոյցներից, Բ. կապուկ:



1. Մովսիսար, գ. տպ.		
2. Շէն թագաւորի աղջիկ, բ. տպ.		
3. Երկու աղբէրացեղ, բ. տպ.		30 »
4. Աստուած աղքատի կերպում		20 »
5. Հէքիաթներ		30 »
6. Երկու զրոյց } ա. երեք խոստովանութիւն		25 »
բ. երեք ոսկու պատմութիւն		
7. Անմեռ աշխարհ		8 »
8. Աղգային առակներ		25 »
9. Աստուած չըճանաչող		10 »
10. Գալօ ափօ, բ. տպ.		12 »
11. Ժամանակը ոսկի, պատկերազարդ		40 »
12. «Սիրտ» գրքից, պատկերազարդ		40 »
13. Քաջ Աղասի, Սիրելի հերոս,		25 »
14. Սասունցի Յովնան		30 »
15. Խուլ Խաչիկ, բ. տպ.		25 »
16. Երկասիրութիւններ		50 »
17. Փոքրոզի բարեկամներ		10 »
18. Վարդանանց և Ղևոնդեանց մասին, զրոյց պատկերներով		30 »
19. Կրօնի դասատուութիւնը Ա. բաժանմունք. ձեռնարկ ուսուցիչների համար		40 »
20. Կրօն. Ա. տարի. աշակ. դասագիրք		15 »
21. Կրօն. Բ. տարի. աշակ. դասագիրք		20 »
22. Կրօն. Գ. տարի. աշակ. դասագիրք		35 »
23. Ծերերի զրոյցներից, ա. կապուկ		20 »

Հեղինակի հասցէն՝ Թիֆլիս. Միքայելեան փողոց
№ 82. բն. 9.